

<ԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ<*>

**ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(Մոսկվա, 2010 թվականի դեկտեմբերի 9)

<*> Տեխնիկական բնույթի փոփոխություններով

Բելառուսի Հանրապետության Կառավարությունը, Ղազախստանի Հանրապետության Կառավարությունը եւ Ռուսաստանի Դաշնության Կառավարությունը (հետայսու՝ Կողմեր),

հաշվի առնելով «Միասնական տնտեսական տարածքի ձեւավորման մասին» 2003 թվականի սեպտեմբերի 19-ի համաձայնագիրը,

առաջնորդվելով «Եվրասիական տնտեսական համայնքի ստեղծման մասին» 2000 թվականի հոկտեմբերի 10-ի պայմանագրով,

կիրարկելով «Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի մասին» 1999 թվականի փետրվարի 26-ի պայմանագրի դրույթները,

ցանկանալով ստեղծել ծառայությունների փոխադարձ առետրի ընդլայնման եւ վերջինիս ազատականացման մակարդակի բարձրացման համար պայմաններ,

ցանկանալով ստեղծել Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետություններում ծառայությունների փոխադարձ առետրի համար միասնական սկզբունքներ եւ կանոններ այդպիսի պետությունների տնտեսական աճին աջակցելու նպատակով,

ցանկանալով մեկ Կողմի պետության անձանց կողմից միջոցների՝ այլ Կողմերի պետությունների տարածքներում ներդրման համար բարենպաստ պայմաններ ստեղծել,

համաձայնեցին հետեւյալի շուրջ՝

Հոդված 1

Սույն Համաձայնագրի նպատակներից ելնելով՝ հետեւյալ հասկացությունները նշանակում են՝

ա) «Կողմերի նորմատիվ իրավական ակտեր»՝ Կողմի պետության օրենքները եւ այլ նորմատիվ իրավական ակտերը,

բ) «Կողմի միջոց»՝ Կողմի նորմատիվ իրավական ակտ, ինչպես նաեւ այդ Կողմի պետության մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից որոշում, գործողություն կամ անգործություն, որոնք ընդունված են նշված Կողմի պետության պետական իշխանության ցանկացած մակարդակում, վերջինիս ինքնակառավարման մարմինների կամ կազմակերպությունների կողմից այդպիսի մարմինների կողմից իրենց պատվիրակված լիազորություններն իրականացնելիս:

Առաջարկության բնույթ կրող պաշտոնական փաստաթղթի՝ Կողմի պետության մարմնի կողմից ընդունելու (հրատարակելու) դեպքում նման առաջարկությունը կարող է ճանաչվել որպես սույն Համաձայնագրի նպատակներն իրականացնելու միջոց, եթե ապացուցվի, որ գործնականում տվյալ Հանձնարարականի հասցեատերերի գերակշիռ մասը (տվյալ Կողմի պետության պետական, տարածքային կառավարման եւ (կամ) տեղական ինքնակառավարման մարմինները, տվյալ Կողմի ոչ կառավարական մարմինները, տվյալ Կողմի անձինք, այլ Կողմերի անձինք, ինչպես նաեւ ցանկացած այլ երրորդ պետության անձինք) հետեւում են դրան,

գ) «Կողմի տարածք»՝ Կողմի պետության տարածքը,

դ) «Կողմի անձ»՝ Կողմի ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ,

ե) «Կողմի ֆիզիկական անձ»՝ Կողմի պետության նորմատիվ իրավական ակտերին համապատասխան այդ Կողմի պետության քաղաքացի համարվող ցանկացած ֆիզիկական անձ,

զ) «Կողմի իրավաբանական անձ»՝ ցանկացած կազմակերպատիրավական ձեւ ունեցող իրավաբանական անձ, որը ստեղծվել կամ հիմնադրվել է Կողմի տարածքում այդ Կողմի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան,

է) «հիմնադրում»՝

i. – այն ցանկացած կազմակերպարարական եւ սեփականության ձեւ ունեցող իրավաբանական անձի ստեղծում, հիմնադրում եւ (կամ) ձեռքբերում (ստեղծված կամ հիմնադրված իրավաբանական անձի կապիտալում մասնակցություն), որոնք նախատեսված են այն Կողմի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան, որի տարածքում նման իրավաբանական անձը ստեղծվում կամ հիմնադրվում է կամ

ii. – կողմի իրավաբանական անձի նկատմամբ հսկողության ձեռքբերում, ինչն արտահայտվում է այդպիսի իրավաբանական անձանց կողմից ընդունվող որոշումներն անմիջականորեն կամ երրորդ անձանց միջոցով սահմանելու հնարավորության ստացմամբ, այդ թվում նաեւ ձայների տնօրինման միջոցով, որոնք տրամադրվում են ձայնի իրավունքով բաժնետոմսերով (բաժնեմասերին), տնօրենների խորհրդում (դիտորդ խորհրդում) եւ կամ իրավաբանական անձի կառավարման այլ մարմիններում մասնակցության միջոցով կամ

iii. – մասնաճյուղի բացում կամ

iv. – ներկայացուցչության բացում կամ

v. – որպես անհատ ձեռնարկատեր գրանցում:

ը) «գործունեություն»՝ սույն հոդվածի «է» կետի «i» – «v» ենթակետերում նշված իրավաբանական անձանց, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների եւ (կամ) անհատ ձեռնարկատերերի գործունեությունը,

թ) «ծառայությունների առետուր»՝ ծառայությունների մատուցում, որն իր մեջ ներառում է ծառայությունների, ստեղծում, բաշխում, շուկայահանում, վաճառք եւ առաքում եւ, որն իրականացվում է հետեւյալ եղանակներով՝

i. – մեկ Կողմի տարածքից մյուս Կողմի տարածք կամ

ii. – մեկ Կողմի տարածքում այդ Կողմի անձի կողմից մյուս Կողմի անձին.

ժ) «ծառայություններ մատուցող»՝ ցանկացած անձ, որը ծառայություն է մատուցում գործունեության իրականացման եւ ծառայությունների առետուրի շրջանակներում:

Գլուխ I. ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 2

1. Սույն Գլխի դրույթները կիրառվում են հիմնադրմանը եւ (կամ) գործունեությանը վերաբերող՝ Կողմերի ցանկացած միջոցների նկատմամբ:

2. Սույն Գլխի դրույթները չեն կիրառվում Կողմի տարածքում այն գործունեության նկատմամբ, որն այդ Կողմի նորմատիվ իրավական ակտերին համապատասխան առնչվում է պետական իշխանության գործառույթների կատարմանը:

3. Սույն Համաձայնագիրը կիրառվում է այն ուժի մտնելու դրությամբ հիմնադրված, ստեղծված, ձեռքբերված կամ վերահսկվող իրավաբանական անձանց, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների, գրանցված անհատ ձեռնարկատերերի նկատմամբ,, որոնք շարունակում են գործել, ինչպես նաեւ՝ սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո հիմնադրված, ստեղծված, ձեռքբերված, վերահսկվող կամ գրանցված անձանց նկատմամբ:

Հոդված 3

1. Յուրաքանչյուր Կողմ ցանկացած այլ Կողմի անձանց տրամադրում է հիմնադրման եւ (կամ) գործունեության առնչությամբ ոչ պակաս բարենպաստ ռեժիմ քան իրենց տարածքում իրենց իսկ սեփական անձանց համանման հանգամանքներում տրամադրվող ռեժիմն է՝ հաշվի առնելով սույն Համաձայնագրի IV Հավելվածում նշված յուրաքանչյուր Կողմի համար անհատական ազգային ցանկով նախատեսված սահմանափակումները:

2. Յուրաքանչյուր Կողմ համանման հանգամանքներում ցանկացած այլ Կողմի անձանց հիմնադրման եւ (կամ) գործունեության առնչությամբ իր տարածքում տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ քան սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետությունների անձանց տրամադրվող ռեժիմն է:

3. Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Կողմերին կնքել սույն հոդվածի 4-րդ կետի պահանջները բավարարող՝ տնտեսական ինտեգրման մասին համաձայնագրեր: Սույն

Համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության հետ տնտեսական ինտեգրման մասին այդպիսի համաձայնագիր կնքող յուրաքանչյուր Կողմ համանման հանգամանքներում այլ Կողմերին փոխադարձ հիմունքով տրամադրում է տնտեսական ինտեգրման մասին նման համաձայնագրի շրջանակներում զիջումներ: Սույն կետում «զիջումներ» նշանակում է Կողմի կողմից մեկ կամ մի քանի սահմանափակումների վերացում, որոնք նախատեսված են սույն Համաձայնագրի IV Հավելվածում նշված անհատական ազգային ցանկով:

4. Սույն Համաձայնագրի նպատակներով սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետության (պետությունների) եւ Կողմերից մեկի միջեւ տնտեսական ինտեգրման մասին համաձայնագրեր են համարվում այն համաձայնագրերը, որոնք համապատասխանում են ստորեւ նշված չափանիշներին՝

i. ընդգրկում են զգալի թվով ծառայությունների ոլորտներ, ինչպես նաեւ ապրիորի չեն բացառում ծառայությունների մատուցման եղանակներից եւ հիմնադրման ու գործունեության հարցերից ոչ մեկը,

ii. ուղղված են առկա խտրական միջոցների վերացմանը, ինչպես նաեւ նոր միջոցներ սահմանելու արգելմանը,

iii. ուղղված են ծառայությունների առետրի ազատականացմանը:

Տնտեսական ինտեգրման մասին այդպիսի համաձայնագրի նպատակը ծառայությունների առետրի եւ դրա մասնակիցների միջեւ հիմնադրման եւ գործունեության պայմանների դյուրացումն է. այն չպետք է հանգեցնի ցանկացած երրորդ պետության առնչությամբ որոշակի ոլորտներում կամ ենթաոլորտներում ծառայությունների վաճառքի բնագավառում խոչընդոտների ընդհանուր մակարդակի բարձրացմանը՝ այն մակարդակի հետ համեմատությամբ, որը կիրառվում էր այդպիսի համաձայնագիր կնքելուց առաջ:

5. Սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության հետ՝ սույն հոդվածի 3-րդ կետում նշված տնտեսական ինտեգրման մասին համաձայնագիր կնքած Կողմը պարտավոր է տրամադրել տեղեկություններ այլ Կողմերին նման համաձայնագիր կնքելու վերաբերյալ այն ստորագրելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Հոդված 4

1. Բացառությամբ սույն Համաձայնագրի IV Հավելվածում նշված անհատական ազգային ցանկով Կողմերից յուրաքանչյուրի համար նախատեսված սահմանափակումների, ոչ մի Կողմ չի կիրառում եւ չի նախատեսում ցանկացած այլ Կողմի նկատմամբ հիմնադրման եւ (կամ) գործունեության հետ կապված սահմանափակումներ՝

ա) հիմնադրման ձեւի, այդ թվում՝ նաեւ իրավաբանական անձի կազմակերպահրավական ձեւի առնչությամբ,

բ) ստեղծվող, հիմնադրվող եւ (կամ) ձեռքբերվող իրավաբանական անձանց, մասնաճյուղերի կամ ներկայացուցչությունների, գրանցվող անհատ ձեռնարկատերերի թվի առնչությամբ,

գ) ձեռքբերվող իրավաբանական անձի կապիտալում բաժնեմասի ծավալի կամ իրավաբանական անձի նկատմամբ վերահսկողության աստիճանի առնչությամբ,

դ) հիմնադրված, ստեղծված, ձեռքբերված կամ վերահսկվող իրավաբանական անձի, մասնաճյուղի, ներկայացուցչության, գրանցված անհատ ձեռնարկատիրոջ գործառնությունների առնչությամբ՝ վերջիններիս կողմից քվոտայի, տնտեսական նպատակահարմարության քննության կամ ցանկացած այլ քանական եղանակով գործունեության իրականացման ընթացքում:

2. Հաշվի առնելով «Աշխատող միգրանտների եւ վերջիններիս ընտանիքների անդամների իրավական կարգավիճակի մասին» 2010 թվականի նոյեմբերի 19-ի համաձայնագրի դրույթները Կողմերից յուրաքանչյուրը հիմնադրված, ստեղծված, ձեռքբերված կամ վերահսկվող իրավաբանական անձի, մասնաճյուղի, ներկայացուցչության, գրանցված անհատ ձեռնարկատիրոջ գործունեության առնչությամբ աշխատողներ վարձելու հետ կապված սահմանափակումներ չի կիրառում եւ չի նախատեսում ցանկացած այլ Կողմի անձանց նկատմամբ՝ բացառությամբ սույն Համաձայնագրի IV Հավելվածում նշված անհատական ազգային ցանկով Կողմերից յուրաքանչյուրի համար նախատեսված սահմանափակումների: Սույն կետի դրույթները չեն կիրառվում աշխատողների կրթությանը, փորձին, որակավորմանը, հեղինակությանը ներկայացվող պահանջների նկատմամբ, եթե այդ կանոնների կիրառումը չի հանգեցնում աշխատողների նկատմամբ փաստացի խտրականության կախված իրենց քաղաքացիությունից:

Հոդված 5

1. Բացառությամբ սույն Համաձայնագրի IV Հավելվածում նշված անհատական ազգային ցանկով Կողմերից յուրաքանչյուրի համար նախատեսված սահմանափակումների Կողմերից ոչ մեկը, որպես հիմնադրման եւ (կամ) գործունեության հետ կապված պայման, այլ Կողմերի անձանց նկատմամբ չի նախատեսում եւ չի կիրառում հետեւյալ հավելյալ պահանջները՝

ա) արտահանել արտադրական բոլոր ապրանքները կամ ծառայությունները կամ դրանց մի մասը,

բ) ներմուծել ապրանքներ կամ ծառայություններ,

գ) գնել կամ օգտագործել ապրանքներ կամ ծառայություններ, որոնց ծագման պետությունը Կողմի պետությունն է,

դ) պահանջներ, որոնք սահմանափակում են այդ Կողմի տարածքում ապրանքների վաճառքը կամ ծառայությունների մատուցումը, այդ Կողմի տարածքից/տարածք ապրանքների ներմուծումը կամ արտահանումը եւ որոնք կապված են արտադրվող ապրանքների (մատուցվող ծառայությունների) ծավալների, տեղական ապրանքների կամ ծառայությունների օգտագործման հետ կամ որոնք սահմանափակում են ձեռնարկության համար արտարժույթի հասանելիությունը, որը հասանելի է սույն կետում նշված գործառնությունների հետ կապված,

ե) փոխանցել առեւտրային արժեք ունեցող տեխնոլոգիաներ, նոու-հաու եւ այլ տեղեկություններ, բացառությամբ այն դեպքերի երբ դրանք փոխանցվում են դատարանի կամ մրցակցության պաշտպանության ոլորտում լիազորված մարմնի որոշման հիման վրա, պահպանելով մրցակցային քաղաքականության իրականացման կանոնները, որոնք սահմանվել են Կողմերի միջեւ այլ Համաձայնագրերով:

2. Սույն հոդվածի 1-ին կետի «ա» - «ե» ենթակետերում նշված պահանջների կատարումը չի կարող նաեւ հիմք հանդիսանալ ցանկացած Կողմի անձի կողմից այլ Կողմի տարածքում հիմնադրման կամ գործունեության հետ կապված որեւէ արտոնություն ստանալու համար:

3. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են առանց վնասելու Մաքսային միության եւ Միասնական տնտեսական տարածքի համաձայնագրերի շրջանակներում Կողմերի միջեւ

այլ պայմանավորվածությունները:

Հոդված 6

1. “Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին” 2010 թվականի սեպտեմբերի 12-ի համաձայնագրից բխող պարտավորությունների համաձայն եւ չնայած սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի դրույթներին, Կողմերից յուրաքանչյուրը իր տարածքում կարող է պահպանել այն իրավաբանական անձանց, որոնք բնական մենաշնորհների սուբյեկտներ են:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված իրավաբանական անձանց իր տարածքում պահպանող Կողմն ապահովում է, որ այդպիսի իրավաբանական անձինք գործեն “Բնական մենաշնորհների սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին” 2010 թվականի սեպտեմբերի 12-ի համաձայնագրով նախատեսված այդ Կողմի պարտավորությունների հետ համատեղելի կերպով:

3. Եթե սույն հոդվածի 1 -ին կետում նշված մեկ Կողմի իրավաբանական անձը, ուղղակիորեն կամ իր կողմից վերահսկվող իրավաբանական անձի միջոցով մենաշնորհային իր իրավունքների ոլորտից դուրս, մրցակցում է այլ Կողմերի անձանց հետ, ապա առաջին Կողմն ապահովում է, որ իր այդպիսի իրավաբանական անձը չհարաշահի իր մենաշնորհային դիրքը՝ գործելով առաջին Կողմի տարածքում ըստ սույն Համաձայնագրի այդպիսի առաջին Կողմի պարտավորությունների հետ անհամատեղելի կերպով:

Գլուխ II. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԱՌԵՎՏՈՒՐԸ

Հոդված 7

1. Սույն Գլխի դրույթները կիրառվում են ծառայությունների առետուրը շոշափող՝ Կողմերի միջոցների նկատմամբ, որոնք ընկալվում են որպես միջոցներ՝

i. ծառայության գնման, դրա համար վճարման կամ օգտագործման առնչությամբ,

ii. ծառայությունների մատչելիության եւ ծառայությունների տրամադրման հետ կապված ծառայությունների օգտագործման առնչությամբ, որոնց վերաբերյալ այդպիսի Կողմերը սահմանում են հանրային պայմանագրի կնքման պահանջ:

2. Սույն Գլխի դրույթները չեն կիրառվում՝

ա) օդային փոխադրամիջոցով փոխադրման իրավունքի եւ անմիջականորեն փոխադրման իրավունքին վերաբերող ծառայությունների նկատմամբ, բացառությամբ՝

i. ինքնաթիռների վերանորոգման եւ շահագործման սպասարկումների,

ii. ավիատրանսպորտային ծառայությունների վաճառքի եւ շուկայավարման,

iii. պահեստավորման համակարգչային համակարգի ծառայությունների,

բ) պետական հաստատությունների կողմից ծառայությունների կառավարական նպատակների համար գնումների նկատմամբ, ոչ թե առետրային նպատակով վերավաճառքի կամ առետրային իրացման համար ծառայություններ մատուցելիս օգտագործման նպատակով կատարվող գնումների նկատմամբ,

գ) պետական իշխանության գործառույթներն իրականացնելիս տրամադրվող ծառայությունների նկատմամբ,

դ)լրավճարների տրամադրման նկատմամբ:

Հոդված 8

Կապի ծառայությունների եւ ֆինանսական ծառայությունների առետրի առանձնահատկությունները կարգավորվում են սույն Համաձայնագրի I եւ V Հավելվածներով:

Հոդված 9

1. Յուրաքանչյուր Կողմ ցանկացած այլ Կողմի ծառայություններին եւ ծառայություն մատուցողներին ծառայությունների առետրի առնչությամբ տրամադրում է ոչ պակաս

բարենպաստ ռեժիմ, քան համանման հանգամանքներում իր սեփական համանման ծառայություններին կամ ծառայություն մատուցողներին տրամադրվող ռեժիմն է, այն ոլորտներում եւ հաշվի առնելով այն սահմանափակումները եւ պայմանները, որոնք նախատեսված են Կողմերից յուրաքանչյուրի համար սույն Համաձայնագրի III Հավելվածում նշած անհատական ազգային ցանկով :

2. Յուրաքանչյուր Կողմ համանման հանգամանքներում ցանկացած այլ Կողմի ծառայություններին կամ ծառայություն մատուցողներին ծառայությունների առետրի առնչությամբ տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան համանման ծառայություններին եւ սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետությունների ծառայություն մատուցողներին տրամադրվող ռեժիմն է, բացառությամբ այն դեպքերի, որոնք նախատեսված են Կողմերից յուրաքանչյուրի համար սույն Համաձայնագրի II Հավելվածում նշած անհատական ազգային ցանկով :

3. Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում, որպեսզի Կողմերը կնքեն սույն հոդվածի 4-րդ կետի պահանջները բավարարող՝ տնտեսական ինտեգրման մասին համաձայնագրեր: Սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության հետ սույն հոդվածի 4-րդ կետում հիշատակված՝ տնտեսական ինտեգրման մասին համաձայնագիր կնքած յուրաքանչյուր Կողմ համանման պայմաններում այլ Կողմերին փոխադարձ հիմունքներով տրամադրում է տնտեսական ինտեգրման մասին այդպիսի համաձայնագրի շրջանակներում զիջումներ: Սույն կետում «զիջումներ» նշանակում է Կողմի կողմից սույն Համաձայնագրի II - III Հավելվածներում նշված վերջինիս անհատական ազգային ցանկերով նախատեսված մեկ կամ մի քանի սահմանափակումների վերացում, ինչպես նաեւ սույն Համաձայնագրի III Հավելվածում նշված Կողմի անհատական ազգային ցանկում չներառված ոլորտներում սույն հոդվածի 1-ին կետով նախատեսված հանգամանքներին համանման հանգամանքների ընդունում:

4. Սույն Համաձայնագրի նպատակներով սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող պետության/պետությունների եւ Կողմերից մեկի միջեւ տնտեսական ինտեգրման մասին համաձայնագրեր են ճանաչվում ստորեւ նշված չափանիշներին բավարարող համաձայնագրերը՝

i. որոնք ընդգրկում են զգալի թվով ծառայությունների ոլորտներ, ինչպես նաեւ ապրիորի չեն բացառում ծառայությունների մատուցման ոչ մի եղանակ եւ հիմնադրմանն ու գործունեությանն առնչվող հարցեր,

ii. որոնք ուղղված են առկա խտրական միջոցների վերացմանը, ինչպես նաև նոր միջոցների նախատեսման արգելմանը, եւ

iii. որոնք ուղղված են ծառայությունների առետրի ազատականացմանը:

Այդպիսի համաձայնագրի նպատակը ծառայությունների վաճառքի եւ դրա մասնակիցների միջեւ հիմնադրման եւ գործունեության պայմանների դյուրացումն է. այն չպետք է հանգեցնի ցանկացած երրորդ պետության առնչությամբ որոշակի ոլորտներում կամ ենթաոլորտներում ծառայությունների վաճառքի բնագավառում խոչընդոտների ընդհանուր մակարդակի բարձրացմանը՝ այն մակարդակի հետ համեմատությամբ, որը կիրառվում էր այդպիսի համաձայնագիր կնքելուց առաջ:

5. Սույն Համաձայնագրի մասնակից չհանդիսացող ցանկացած պետության հետ՝ սույն հոդվածի 3-րդ կետում նշված տնտեսական ինտեգրման մասին համաձայնագիր կնքած Կողմը վերջինս ստորագրելուց հետո մեկ ամսվա ընթացքում պարտավոր է մյուս Կողմերին տրամադրել նման համաձայնագիր կնքելու վերաբերյալ տեղեկություններ:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի III Հավելվածում թվարկված ոլորտներում, բացառությամբ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված հավելվածներով նախատեսված սահմանափակումների, Կողմերից ոչ մեկը չի կիրառում եւ չի նախատեսում մյուս Կողմի ծառայությունների կամ ծառայություն մատուցողների նկատմամբ ծառայությունների առետրի հետ կապված սահմանափակումներ՝

i. քվոտայի, մենաշնորհի, տնտեսական նպատակահարմարության քննության կամ ցանկացած այլ քանակական եղանակով ծառայություն մատուցողների թվի նկատմամբ.

ii. քվոտայի, տնտեսական նպատակահարմարության քննության կամ ցանկացած այլ քանակական եղանակով ցանկացած ծառայություն մատուցողի գործառնությունների նկատմամբ:

Հոդված 10bis

Սույն Համաձայնագրի III Հավելվածում թվարկված ոլորտներում, բացառությամբ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, Կողմերից ոչ մեկը մյուս Կողմի ծառայություն մատուցողի նկատմամբ, որպես ծառայությունների առետրի համար պայման, չի նախատեսում եւ չի կիրառում հիմնադրման պահանջներ (ինչպես այն սահմանված է սույն Համաձայնագրի «ը» կետում), :

Հոդված 11

Կողմերը տարին ոչ պակաս քան երեք անգամ բանակցություններ են վարում ուղղված սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված սահմանափակումների եւ սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածում նշված սահմանափակումների թվի աստիճանաբար կրճատմանը ազատականացման առավել բարձր մակարդակի հասնելու նպատակով:

Գլուխ III. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄՈՒՏՔԸ, ԵԼՔԸ, ԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 12

Ֆիզիկական անձանց մուտքը, ելքը, կացությունը եւ աշխատանքային գործունեությունը սահմանվում է ազգային օրենսդրությամբ եւ միջազգային պայմանագրերով, որոնց մասնակից են հանդիսանում Կողմերի պետությունները:

Գլուխ IV. ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 13

1. Յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ իր ցանկացած նորմատիվ իրավական ակտ, որը շոշափում է կամ կարող է շոշափել սույն Համաձայնագրում ներառված խնդիրներ, հրապարակվի պաշտոնական աղբյուրում, իսկ հնարավորության դեպքում՝ հատուկ առանձնացված էլեկտրոնային կայքում, որպեսզի ցանկացած անձ, որի իրավունքները եւ (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել Կողմի այդպիսի նորմատիվ իրավական ակտերով, հնարավորություն ունենա դրանց հետ ծանոթանալու:

2. Սույն հոդվածի 1-ին կետում նշված նորմատիվ իրավական ակտերի հրապարակումը պետք է իր մեջ ներառի այդպիսի նորմատիվ իրավական ակտերի կիրառման նպատակների բացատրությունը:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված ցանկացած նորմատիվ իրավական ակտ պետք է հրապարակվի այն անձանց իրավական որոշակիությունը եւ հիմնավորված սպասումներն ապահովող ժամկետում, որոնց իրավունքները եւ (կամ) պարտավորությունները կարող են շոշափվել Կողմերի այդպիսի նորմատիվ իրավական ակտերով, սակայն, ցանկացած դեպքում՝ մինչեւ վերջիններիս ուժի մեջ մտնելու ամսաթիվը:

4. Յուրաքանչյուր Կողմ հաստատում է ցանկացած անձի այն գրավոր հարցումների պատասխանների տրամադրումն ապահովող մեխանիզմ, որոնք վերաբերում են սույն Համաձայնագրում ընդգրկված հարցերի շուրջ գործող եւ (կամ) պլանավորվող իրավական ակտերին: Հարցումների պատասխանները պետք է տրամադրվեն այդպիսի շահագրգիռ անձին գրավոր հարցումը ստանալու օրվանից ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում:

Գլուխ V. ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Հոդված 14

Ծառայությունների առեստուրը շոշափող՝ Կողմերի միջոցների նկատմամբ Կողմերը կիրառում են հետեւյալ դրույթները:

1. Սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված հավելվածներում ներառված ոլորտների առնչությամբ յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ծառայությունների առետրի վրա ազդող իր բոլոր միջոցները կիրառվեն խելամիտ, օբյեկտիվ եւ անկողմնակալ ձեւով:

2. ա) Յուրաքանչյուր Կողմ, որքան գործնականում հնարավոր է շուտ, ունի կամ ձեւավորում է դատական, արբիտրաժային կամ վարչական մարմիններ կամ ընթացակարգեր, որոնք ծառայություններ մատուցողի հարցումով, որի շահերը շոշափվում են, ապահովում են ծառայությունների առետրի վրա ազդող համապատասխան վարչական որոշումները շտկող միջոցների անհետաձգելի քննարկումը եւ հիմնավորված ձեռնարկումը: Այն դեպքերում, երբ նշված ընթացակարգերը անկախ չեն մարմնից, որը լիազորված է այդպիսի վարչական որոշումներ ընդունել, ապա Կողմն ապահովում է, որ ընթացակարգերն իրականում ծառայեն օբյեկտիվ եւ անկողմնակալ քննարկմանը:

բ) Սույն կետի «ա» ենթակետի դրույթները Կողմի նկատմամբ չեն նախատեսում պահանջներ ձեւավորել այդպիսի մարմիններ կամ ընթացակարգեր, երբ դա անհամատեղելի է վերջինիս սահմանադրական կարգի կամ դատական համակարգի էության հետ:

3. Երբ պահանջվում է սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված հավելվածներում ներառված ծառայությունների մատուցման թույլտվություն, Կողմի իրավասու մարմինները ազգային օրենսդրության եւ կարգավորման կանոնների պահանջների համաձայն ձեւակերպված համարվող դիմումը ներկայացնելուց հետո խելամիտ ժամկետում, տեղեկացնում են հայտատուին դիմումի վերաբերյալ որոշման մասին: Հայտատուի հարցումով Կողմի իրավասու մարմիններն առանց ավելորդ ձգձգումների տրամադրում են տեղեկություններ դիմումի քննարկման ընթացքի մասին:

4. Այդպիսի դրույթի ապահովման համար, որպեսզի որակավորման պահանջներին եւ ընթացակարգերին, տեխնիկական ստանդարտներին եւ լիցենզավորման պահանջներին վերաբերող միջոցները չստեղծեն չարդարացված խոչընդոտներ ծառայությունների առետրում, Կողմերը համապատասխան մարմինների միջոցով իրավունք ունեն մշակել ցանկացած անհրաժեշտ կանոններ, որոնք նրանք կարող են ստեղծել: Այդ կանոնների նպատակն է ապահովել, որ այդպիսի պահանջները ի թիվս այլոց՝

ա) հիմնվեն օբյեկտիվ եւ բաց չափանիշների վրա, ինչպիսիք են՝ ծառայություն մատուցելու գիտակությունը եւ կարողությունը,

բ) չլինեն ավելի ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է ծառայության որակն ապահովելու

համար,

գ) լիցենզավորման ընթացակարգի դեպքում՝ չլինեն ծառայությունների մատուցման համար ինքնին սահմանափակում:

5. ա) Սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված հավելվածներում ընդգրկված ծառայությունների ոլորտներում մինչև սույն հոդվածի 4-րդ կետի համաձայն այդ ոլորտների համար մշակված կանոններն ուժի մեջ մտնելը, Կողմերը չեն կիրառում լիցենզավորման կամ որակավորման պահանջներ եւ տեխնիկական ստանդարտներ, որոնք չեղյալ են հայտարարում կամ կրճատում են օգուտները, որոնք տրամադրվում են սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված հավելվածներում ընդգրկված պայմանների համաձայն այնպիսի եղանակով, որը՝

i. չի համապատասխանում սույն հոդվածի 4-րդ կետի «ա», «բ» կամ «գ» ենթակետերում նշված չափանիշներին,

ii. չէր կարող այդ Կողմի կողմից խելամտորեն ակնկալվել սույն Համաձայնագրի ստորագրման ամսաթվին:

բ) Սույն հոդվածի 5-րդ կետի «ա» ենթակետում նշված պարտավորությունների՝ Կողմի կողմից կատարման փաստը որոշելիս ուշադրություն է դարձվում վերջինիս կողմից կիրառվող համապատասխան միջազգային կազմակերպությունների միջազգային ստանդարտներին:

6. Եթե սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված հավելվածներում ընդգրկված են մասնագիտական ծառայությունների մասով պարտավորություններ, ապա յուրաքանչյուր Կողմ ապահովում է համապատասխան ընթացակարգեր ցանկացած այլ Կողմի մասնագետների գիտակությունը ստուգելու համար:

Հոդված 15

Եթե Կողմը հիմնադրման եւ (կամ) գործունեության նկատմամբ կիրառում է լիցենզավորում, ապա այդ Կողմն ապահովում է, որ՝

i. գործունեություն իրականացնելու համար լիցենզիայի տրամադրման համար պատասխանատու իրավասու պետական մարմինների անվանումները հրապարակվեն կամ

այլ կերպ հաղորդվեն հանրությանը ,

ii. լիցենզավորման ընթացակարգերն ինքնին չհանդիսանան հիմնադրման կամ գործունեության համար սահմանափակում եւ, որ գործունեության իրականացման իրավունքի հետ անմիջականորեն կապված լիցենզավորման պահանջները ինքնին չհանդիսանան գործունեության համար անհիմն խոչընդոտ,

iii. լիցենզավորման բոլոր ընթացակարգերը եւ պահանջները սահմանված լինեն նորմատիվ իրավական ակտերում եւ, որ լիցենզավորման ընթացակարգեր կամ պահանջներ սահմանող կամ կիրառող ցանկացած նորմատիվ իրավական ակտ հրապարակվի մինչեւ իր ուժի մեջ մտնելը սույն Համաձայնագրի 14-րդ հոդվածի դրույթների համաձայն,

iv. լիցենզավորող մարմիններն ընդունեն որոշումներ լիցենզիայի տրամադրման (մերժման) մասին համապատասխան նորմատիվ իրավական ակտում սահմանված ժամկետում, սակայն, այնուամենայնիվ, ոչ ուշ, քան լիցենզիայի տրամադրման համար դիմումը ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում: Ֆինանսական ծառայությունների ոլորտի համար լիցենզիա տալու (մերժելու) մասին որոշում ընդունելու ժամկետները սահմանվում են սույն Համաձայնագրի V Հավելվածում,

v. ցանկացած գումար, որը գանձվում է լիցենզիայի տրամադրման համար դիմումը ներկայացնելու եւ ուսումնասիրելու առնչությամբ, ինքնին չհանդիսանա հիմնադրման եւ գործունեության համար սահմանափակում եւ հիմնվի դիմումը ուսումնասիրելու եւ լիցենզիա (թույլտվություն) տալու հետ կապված լիցենզավորող մարմնի ծախսերի վրա,

vi. սույն հոդվածի «iv» կետում նշված ժամանակահատվածը լրանալուց հետո եւ դիմողի պահանջով Կողմի համապատասխան լիցենզավորող մարմինը տեղեկացնի նրան իր դիմումը ուսումնասիրելու ընթացքի մասին, ինչպես նաեւ այն մասին, թե արդյոք այդ դիմումը համարվում է պատշաճ կերպով լրացված: Ցանկացած դեպքում դիմողին հնարավորություն է տրվելու դիմումում տեխնիկական ուղղումներ կատարել: Դիմումը չի համարվի պատշաճ կերպով լրացված, քանի դեռ չեն ստացվել համապատասխան օրենքներում եւ Կողմերի այլ նորմատիվ իրավական ակտերում նշված բոլոր տեղեկությունները եւ փաստաթղթերը,

vii. դիմողի գրավոր պահանջի համաձայն, ում մերժվել է դիմումի ընդունումը, դիմումի ընդունումը մերժած լիցենզավորող մարմինը գրավոր տեղեկացնի դիմողին այդպիսի մերժման պատճառների մասին: Այդ դրույթը, սակայն, չպետք է մեկնաբանվի որպես լիցենզավորող մարմնից տեղեկությունները բացահայտել պահանջող, որոնց

բացահայտումը խոչընդոտում է օրենքի կատարմանը կամ այլ կերպ հակասում է հանրային շահերին կամ անվտանգության էական շահերին,

viii. Այն դեպքում, երբ դիմումի ընդունումը մերժվել է, դիմողը կարողանա ներկայացնել նոր դիմում, որտեղ նա կփորձի վերացնել լիցենզիայի (թույլտվության) տրման համար առկա բոլոր խնդիրները,

ix. տրամադրվող լիցենզիան գործի Կողմի ամբողջ տարածքում: Սույն Համաձայնագրի I Հավելվածով կարող են սահմանվել սույն կետի դրույթներից բացառություններ:

Հոդված 16

1. Կողմերը ձգտում են միասնականացնել իրենց ազգային օրենսդրությունը՝ հաշվի առնելով միջազգային սկզբունքները եւ ստանդարտները եւ լավագույն միջազգային փորձը ծառայությունների առետրի կարգավորման ինչպես նաեւ հիմնադրման եւ գործունեության ոլորտներում՝ նկատի ունենալով ծառայությունների եւ կապիտալի միասնական շուկայի ձեւավորման ավարտը:

2. Այդ նպատակով Կողմերն անց են կացնում բանակցություններ տարին ոչ պակաս քան երկու անգամ՝

կարգավորման առաջնահերթ ոլորտները եւ (կամ) տնտեսության հատվածները օրենսդրության միասնականացման անհրաժեշտության տեսանկյունից համաձայնեցնելու համար,

միասնականացման պլանը եւ ժամանակավոր ժամանակացույցը (գրաֆիկը) համաձայնեցնելու համար:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված բանակցությունները պետք է ավարտվեն ոչ ուշ, քան սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հինգ տարի հետո:

4. Ֆինանսական ծառայությունների եւ հաղորդակցման ծառայությունների ոլորտները չեն կարող ապրիորի բացառվել սույն հոդվածի 2-րդ կետում նշված բանակցությունների ոլորտից:

5. Կողմերի անձանց կողմից ցանկացած այլ Կողմի տարածքում ֆինանսական

ծառայությունների ոլորտում գործունեության իրականացման կանոնների միասնականացման մեխանիզմը սահմանվում է սույն Համաձայնագրի V Հավելվածով:

Գլուխ VI. ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 17

Յուրաքանչյուր Կողմ իր տարածքում այլ Կողմերի անձանց մասնավորեցման մեջ մասնակցության առնչությամբ տրամադրում է ոչ պակաս բարենպաստ ռեժիմ քան իր սեփական անձանց տրամադրվող ռեժիմն է:

Հոդված 17bis

1. Կողմի տարածքում այն անձանց պահպանման դեպքում, որոնց կապիտալում մասնակցում է այդ Կողմի պետությունը կամ, որոնք վերահսկվում են այդ Կողմի պետության կողմից, նման Կողմն ապահովում է, որ նշված անձինք՝

ա) իրենց գործունեությունն իրականացնեն առետրային նկատառումներից ելնելով եւ հանդես գան սույն Համաձայնագրով կարգավորվող հարաբերություններում՝

i. այդ հարաբերությունների այլ մասնակիցների հետ հավասարության սկզբունքի հիման վրա,

ii. այդ հարաբերությունների այլ մասնակիցների նկատմամբ խտրականության բացառման սկզբունքի հիման վրա՝ ելնելով իրենց քաղաքացիությունից, գրանցման (հիմնադրման) վայրից, կազմակերպահրավական ձեւից կամ սեփականության ձեւից, ինչպես նաեւ

բ) չստանան իրավունքներ, արտոնություններ կամ պարտավորություններ, բացառությամբ այդ Կողմի պետության՝ իրենց կապիտալում մասնակցության ուժով կամ այդ Կողմի պետության՝ իրենց նկատմամբ վերահսկողության պատճառով,

բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի անձանց գործունեությունը, որոնց կապիտալում մասնակցում է պետությունը կամ որոնք վերահսկվում են պետության կողմից, ուղղված է տվյալ Կողմի պետության սոցիալական քաղաքականության խնդիրների լուծմանը:

2. Սույն հոդվածի 1-ին կետի դրույթները տարածվում են նաեւ այն ընկերությունների վրա, որոնք օժտված են ձեւականորեն կամ փաստացի բացառիկ իրավունքներով կամ հատուկ արտոնություններով, բացառությամբ սույն Համաձայնագրի 10-րդ հոդվածի 1-ին կետի «i» ենթակետի եւ 4-րդ հոդվածի 1-ին կետի «բ» եւ «գ» ենթակետերի հիման վրա սույն Համաձայնագրի IV Հավելվածում նշված Կողմերի անհատական ազգային ցանկերում ներառված իրավունքներով եւ (կամ) արտոնություններով օժտված ձեռնարկությունների, եւ սույն Համաձայնագրի 6-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան պահպանվող ձեռնարկությունները:

3. Կողմերից յուրաքանչյուրն ապահովում է, որ այդ Կողմի բոլոր պետական մարմինները այդ Կողմի պետության պետական իշխանության ցանկացած մակարդակում կամ վերջինիս ինքնակառավարման մարմինները լինեն անկախ, չվերահսկվող եւ ոչ հաշվետու ցանկացած այլ անձի, որն իրականացնում է տնտեսության այնպիսի ոլորտում տնտեսական գործունեություն , որի կարգավորումը մտնում է համապատասխան մարմնի իրավասության մեջ: Այդ Կողմի միջոցները, այդ թվում նաեւ սույն կետում նշված մարմնի որոշումները, վերջինիս կողմից սահմանվող եւ կիրառվող կանոնները եւ ընթացակարգերը պետք է լինեն անկողմնակալ եւ օբյեկտիվ տնտեսական գործունեություն իրականացնող բոլոր անձանց նկատմամբ:

Գլուխ VII. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

Հոդված 18

1. Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում ցանկացած Կողմի ընդունել կամ կիրառել ստորեւ թվարկված միջոցները, այդ թվում նաեւ թաքնված սահմանափակումները պայմանով, որ այդ միջոցները չեն կիրառվի մի եղանակով, որը Կողմերի անձանց միջեւ ստեղծում է կամայական կամ չարդարացված խտրականության դրսեւորման

ծառայությունների առետրի, հիմնադրման եւ (կամ) գործունեության առնչությամբ միջոցներ, մասնավորապես՝

ա) որոնք անհրաժեշտ են հասարակական բարոյականության պաշտպանության կամ հասարակական կարգի պահպանման համար: Հասարակական կարգի նկատառումներով բացառությունները կարող են կիրառվել միայն այն դեպքերում, երբ հասարակության արմատական շահերից մեկի նկատմամբ իրական եւ բավականին լուրջ վտանգ է առաջանում,

բ) որոնք անհրաժեշտ են մարդկանց, կենդանիների կամ բույսերի կյանքի կամ առողջության պաշտպանության համար,

գ) որոնք անհրաժեշտ են կանոնների կամ օրենքների պահպանման համար, որոնք համապատասխանում են սույն Համաձայնագրի դրույթներին, այդ թվում նաեւ նրանք, որոնք առնչվում են՝

i. շփոթեցնող կամ անբարեխիղճ գործելակերպի կամ քաղաքացիաիրավական պայմանագրերի խախտման հետեւանքների կանխարգելման հետ,

ii. անձնական բնույթի տեղեկությունների մշակման եւ տարածման եւ անձնական կյանքի եւ հաշիվների մասին տեղեկությունների գաղտնիության պաշտպանության ժամանակ առանձին անձանց մասնավոր կյանքի մեջ ներխուժելուց պաշտպանության հետ,

դ) որոնք ազգային ռեժիմի տրամադրման մասով սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 1-ին կետի, 3-րդ հոդվածի 1-ին կետի հետ անհամատեղելի են պայմանով, որ փաստացի տրամադրվող ռեժիմում տարբերությունը պայմանավորված է հիմնադրման, գործունեության եւ ծառայությունների առետրի առնչությամբ այլ Կողմի անձանցից արդար կամ արդյունավետ հարկում կամ հարկերի գանձում ապահովելու ձգտմամբ,

ե) որոնք սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածի 2-րդ կետի, 3-րդ հոդվածի 2-րդ կետի հետ անհամատեղելի են պայմանով, որ ռեժիմով տարբերությունը հարկման հետ կապված հարցերի վերաբերյալ համաձայնագրի, այդ թվում՝ կրկնակի հարկումից խուսափելու մասին համաձայնագրի հետեւանքն է, որի մասնակիցն է համապատասխան Կողմը:

2. Կողմերից յուրաքանչյուրը չի օգտագործում իր նորմատիվ իրավական ակտերով նախատեսված եւ կյանքի ու առողջության, շրջակա միջավայրի պաշտպանությանը, անվտանգությանը, ինչպես նաեւ աշխատանքային ստանդարտներին վերաբերող պահանջների մեղմացում, որպես այլ Կողմերի անձանց, ինչպես նաեւ երրորդ

պետությունների անձանց իր տարածքում հիմնադրվելու համար գրավելու մեխանիզմ:

Հոդված 19

Սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես խոչընդոտ ցանկացած Կողմի համար ձեռնարկելու ցանկացած գործողություններ, որոնք այն անհրաժեշտ է համարում երկրի պաշտպանության կամ անվտանգության ոլորտում իր կարեւորագույն շահերի պաշտպանության համար:

Հոդված 20

1. Եթե Կողմերից մեկը երրորդ պետության նկատմամբ պահպանում է, սահմանափակումների կամ արգելքների կիրառումը հիմնադրման, գործունեության կամ ծառայությունների առևտրի առնչությամբ, ապա սույն Համաձայնագրում ոչինչ չպետք է մեկնաբանվի, որպես այդպիսի Կողմին պարտավորեցնող տարածել սույն Համաձայնագրի դրույթները մեկ այլ Կողմի անձանց վրա, եթե այդ անձը պատկանում է կամ վերահսկվում է նշված երրորդ պետության անձի կողմից, իսկ սույն Համաձայնագրի դրույթների տարածումը կհանգեցնի վերը նշված արգելքների եւ սահմանափակումների շրջանցելուն կամ խախտմանը:

2. Կողմը կարող է չտարածել սույն Համաձայնագրին համապատասխան իր կողմից ընդունվող իր պարտավորությունները այլ Կողմի անձանց վրա հիմնադրման, գործունեության կամ ծառայությունների առևտրի առնչությամբ, եթե այլ Կողմի այդպիսի անձը չունի զգալի աշխատանքային գործառնություններ այդպիսի մեկ այլ Կողմի տարածքում եւ այն պատկանում կամ վերահսկվում է առաջին Կողմի անձի կամ երրորդ պետության անձի կողմից, որը սույն Համաձայնագրի Կողմ չէ:

Հոդված 21

1. Յուրաքանչյուր Կողմ չեղյալ է հայտարարում գործող սահմանափակումները եւ չի նախատեսում նոր սահմանափակումներ փոխանցումների եւ վճարումների նկատմամբ հիմնադրման եւ գործունեության, ինչպես նաեւ ծառայությունների առետրի հետ կապված, որոնց նկատմամբ Կողմը պարտավորություններ է ստանձնել սույն Համաձայնագրի 3-րդ եւ 9-րդ հոդվածների համաձայն, բացառությամբ սույն Համաձայնագրի 22-րդ հոդվածով նախատեսվող դեպքերի:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի շոշափում ցանկացած Կողմի իրավունքները եւ պարտավորությունները, որոնք բխում են Միջազգային արժութային հիմնադրամում իր անդամակցությունից, ներառյալ այն իրավունքները եւ պարտավորությունները, որոնք վերաբերում են արժութային գործառնությունների կարգավորման միջոցներին պայմանով, որ Կողմի այդպիսի միջոցները համապատասխանում են 1944 թվականի հուլիսի 22-ի Միջազգային արժութային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին եւ (կամ) պայմանով, որ Կողմը չի սահմանում սահմանափակումներ վճարումների փոխանցման նկատմամբ, որոնք անհամատեղելի են սույն Համաձայնագրով իր պարտավորությունների հետ, որոնք վերաբերում են այդպիսի գործառնություններին՝ բացառությամբ սույն Համաձայնագրի 22-րդ հոդվածում նշված դեպքերի կամ Միջազգային արժութային հիմնադրամի խնդրանքով սահմանափակումների կիրառման դեպքերի:

Հոդված 22

1. Վճարային հաշվեկշռի վիճակի վատթարացման, ոսկեարժութային պահուստների զգալի կրճատման, ազգային արժույթի փոխարժեքի կտրուկ տատանումների կամ դրա սպառնալիքի դեպքում Կողմը կարող է նախատեսել սահմանափակումներ սույն Համաձայնագրի 21-րդ հոդվածի 1-ին կետում նշված վճարումների փոխանցումների նկատմամբ:

2. սույն հոդվածի 1-ին կետում նշված սահմանափակումները՝

ա) չպետք է Կողմերի միջեւ խտրականություն առաջացնեն.

բ) պետք է համապատասխանեն 1994 թվականի հուլիսի 22-ի Միջազգային արժույթային հիմնադրամի համաձայնագրի հոդվածներին,

գ) չպետք է ավելորդ վնաս հասցնեն ցանկացած այլ Կողմի առետրային, տնտեսական եւ ֆինանսական շահերին,

դ) չպետք է լինեն առավել ծանրաբեռնող, քան անհրաժեշտ է սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների հաղթահարման համար,

ե) պետք է լինեն ժամանակավոր եւ աստիճանաբար վերացվեն ըստ սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքների վերացմանը զուգահեռ:

3. Այդպիսի սահմանափակումների գործողությունների ոլորտը որոշելիս Կողմերը կարող են նախապատվությունը տալ ապրանքների մատակարարմանը կամ ծառայությունների մատուցմանը, որոնք առավել կարեւոր են իրենց տնտեսական ծրագրերի կամ զարգացման ծրագրերի համար: Սակայն, այդպիսի սահմանափակումները չեն սահմանվում եւ չեն պահպանվում տնտեսության որոշակի հատվածի պաշտպանության նպատակով:

4. Սույն հոդվածի 1-ին կետին համապատասխան Կողմի կողմից սահմանված կամ պահպանված ցանկացած սահմանափակում կամ դրա ցանկացած փոփոխություն այլ Կողմերին անհապաղ ծանուցման առարկա են:

Գլուխ VIII. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 23

Այն դեպքում, երբ Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության Միասնական տնտեսական տարածքի առանձին համաձայնագրերով ծառայությունների առետրի ոլորտում այլ միջոցներ են սահմանված, քան նրանք, որոնք որոշված են կողմերից յուրաքանչյուրի համար անհատական ազգային ցանկերով սույն Համաձայնագրի II - IV Հավելվածներում, ապա կիրառվում են այդպիսի առանձին համաձայնագրերի դրույթները:

Հոդված 24

Սույն Համաձայնագրի մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված Կողմերի միջեւ վեճերը կարգավորվում են խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման միջոցով:

Եթե Կողմերի կողմից վեճը չկարգավորվի վեճի մի կողմից մյուսին ուղղված խորհրդակցությունների եւ բանակցությունների անցկացման մասին պաշտոնական գրավոր խնդրագիրը ստանալու օրվանից վեց ամսվա ընթացքում, ապա վեճի ցանկացած կողմ կարող է այն փոխանցել Եվրասիական տնտեսական միության դատարանի քննությանը:

Հոդված 25

Սույն Համաձայնագրի I - V Հավելվածներն իր անքակտելի մասն են կազմում:

Հոդված 26

Սույն Համաձայնագիրը բաց է Մաքսային միության ցանկացած մասնակից պետության միանալու համար այն պայմանների հիման վրա, որոնք համաձայնեցվել են Կողմերի պետությունների հետ միացող պետության բանակցությունների ընթացքում, որոնց համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտել:

Հոդված 27

Կողմերի փոխհամաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ:

Հոդված 28

1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը այն ստորագրած Կողմերի կողմից կատարվելու մասին վերջին գրավոր ծանուցագիրն ավանդապահի կողմից ստանալու ամսաթվից:

2. Սույն Համաձայնագրի ավանդապահը Եվրասիական տնտեսական միության ինտեգրման հարցերով կոմիտեն է:

Կատարված է Մոսկվա քաղաքում, 2010 թվականի դեկտեմբերի 9-ին մեկ բնօրինակով, ռուսերենով: Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է ավանդապահի պահոցում, որը յուրաքանչյուր Կողմի կտրամադրի իր հաստատված պատճենը:

(Ստորագրություններ)

ԿԱՊԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒԿԱ

Կիրառման ոլորտը

Սույն Հավելվածը կիրառվում է այն Կողմերի միջոցների նկատմամբ, որոնք կարգավորում են էլեկտրակապի բնագավառում գործունեության իրականացումը:

Սույն Հավելվածը չի կիրառվում Կողմի ներսում հեռուստաալիքների եւ (կամ) ռադիոալիքների հաղորդումը տարածելու համար ծառայություններ կարգավորող միջոցների նկատմամբ, սակայն կիրառվում է հեռուստատեսային եւ/կամ ռադիոազդանշաններ հեռարձակելու գործընթացում Կողմերի էլեկտրակապի օպերատորների փոխազդեցության խնդիրները կարգավորող միջոցների նկատմամբ:

Սույն Հավելվածը չի կիրառվում փոստային կապի բնագավառում իրականացվող գործունեության նկատմամբ:

Սույն Հավելվածում ոչինչ չի մեկնաբանվում, որպես ցանկացած Կողմից (կամ Կողմից իր իրավասության տակ գտնվող ծառայություններ մատուցողներին պարտադրել պահանջող) ընդհանուր օգտագործման էլեկտրակապի ցանցին միացում չունեցող էլեկտրակապի ցանցերի նկատմամբ հատուկ պահանջներ սահմանել պահանջող:

Սահմանումները

1. Սույն Հավելվածում օգտագործվող հիմնական հասկացություններ՝

- էլեկտրակապի ծառայություններ՝ գործունեություն էլեկտրակապի հաղորդագրությունների ընդունման, մշակման, պահման եւ փոխադրման եւ հանձնման գծով,

- էլեկտրակապի ունիվերսալ ծառայություններ՝ էլեկտրակապի ծառայություններ, որոնց մատուցումը ցանկացած էլեկտրակապի ծառայություններից օգտվողի համար Կողմի ամբողջ տարածքում պետք է կատարվի տվյալ Կողմի ունիվերսալ սպասարկման

օպերատորների համար պարտադիր սահմանված որակով եւ մատչելի գնով,

- Ընդհանուր օգտագործման էլեկտրակապի ցանց՝ տեխնոլոգիական համակարգ, որն իր մեջ ներառում է կապի միջոցներ եւ գծեր, որը նախատեսված է Կողմի տարածքում կապի ծառայություններից ցանկացած օգտվողի մատուցել վճարովի էլեկտրակապի ծառայություններ Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան,

- Ռադիոալիք՝ հետագա տարածման համար հեռարձակման ցանցին համապատասխան ձեւավորված ռադիոհաղորդումների եւ (կամ) այլ ձայնային հաղորդագրությունների եւ նյութերի, հնչյունագրերի (ֆոնոգրամ) ամբողջություն ներկայացնող զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոց,

- Հեռուստաալիք՝ հետագա տարածման համար հեռարձակման ցանցին համապատասխան ձեւավորված հեռուստատեսային ծրագրերի եւ (կամ) այլ տեսալսողական հաղորդագրությունների եւ նյութերի ամբողջություն իրենից ներկայացնող զանգվածային լրատվության էլեկտրոնային միջոց:

Տեղեկատվության մատչելիությունը

2. Ծառայությունների առետրի մասին Համաձայնագրի (հետայսու՝ Համաձայնագիր) 5-րդ հոդվածը կիրառելիս՝ յուրաքանչյուր Կողմ ապահովում է, որ ընդհանուր օգտագործման էլեկտրակապի ցանցերին եւ էլեկտրակապի ծառայություններին մուտքի պայմանների՝ ներառյալ ծառայությունների մատուցման պայմանների մասին տեղեկությունները, այդ թվում նաեւ սակագները (գները) լինեն հանրամատչելի, այդպիսի ցանցերի հետ տեխնիկական միացումների մասնագրերը, այդպիսի մուտքին եւ օգտագործմանը վերաբերող ստանդարտների մշակման եւ ընդունման համար պատասխանատու մարմինների մասին տեղեկությունները, վերջնակետային սարքավորման կամ այլ սարքավորումների միացմանը վերաբերող պայմանները, ինչպես նաեւ ծանուցագրերի, գրանցման կամ լիցենզավորման վերաբերյալ պահանջները, եթե դրանք անհրաժեշտ են:

Լիցենզավորումը

3. Էլեկտրակապի ծառայությունների մատուցման գործունեությունն իրականացվում է Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով Կողմ հանդիսացող պետությունների

լիազորված մարմինների կողմից տրված լիցենզիաների հիման վրա այնտեղ նշված տարածքների, սահմանված ժամկետի սահմաններում եւ Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով էլեկտրակապի յուրաքանչյուր օպերատորին շնորհված համարակալման օգտագործմամբ:

Ռադիոհաճախականության տիրույթի օգտագործմամբ էլեկտրակապի ծառայությունների մատուցման գործունեություն իրականացնելիս՝ իրականացման լիցենզիայից բացի անհրաժեշտ է նաեւ ստանալ ռադիոհաճախականության տիրույթի օգտագործման թույլտվություն:

Որոշակի հաճախականությունների նշանակումն (յուրացումը) իրականացվում է Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ռադիոհաճախականության տիրույթի օգտագործման հետ կապված վճարները գանձվում են Կողմերի օրենսդրությամբ սահմանված կարգով եւ չափերով:

Էլեկտրակապի օպերատորներին տրամադրվող ծառայություններից եւ ընդհանուր օգտագործման էլեկտրակապի ցանցերից օգտվելու հնարավորությունը

4. Կողմերը ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ներառյալ ազգային օրենսդրության մակարդակով սահմանված իրավական եւ վարչական միջոցները, էլեկտրակապի ցանցերից եւ ծառայություններից առանց խտրական օգտվելու հնարավորություն ապահովելու համար:

5. Էլեկտրակապի օպերատորի ընդհանուր օգտագործման էլեկտրակապի ցանցին միացումը անկախ էլեկտրակապի ծառայությունների շուկայում վերջինիս դիրքից Կողմերն իրականացնում են ազգային օրենսդրության հիման վրա տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում ոչ պակաս բարենպաստ պայմաններով քան այն պայմանները, որոնք նախատեսված են համադրելի պայմաններում գործող Կողմերի էլեկտրակապի այլ օպերատորների համար:

Էլեկտրակապի ծառայությունների սակագները

6. Կողմերն իրավունք ունեն նախատեսել եւ կիրառել էլեկտրակապի ծառայությունների որոշ տեսակների սակագների պետական կարգավորում: Էլեկտրակապի ծառայությունների

սակագների ձեւավորումը պետք է հիմնված լինի Կողմի ազգային օրենսդրության պահանջների վրա: Կողմերը երաշխավորում են Կողմերից որեւէ մեկի տարածքում գտնվող սույն Համաձայնագրի ցանկացած Կողմի անձանց էլեկտրակապի ծառայությունների մատուցում գտնվելու երկրի սակագներով:

7. Էլեկտրակապի ծառայությունների այն տեսակների նկատմամբ, որոնց սակագները ենթակա չեն պետական կարգավորման, Կողմերն ապահովում են Կողմերի կապի ծառայությունների մատուցողների միջեւ մրցակցության պայմանների խեղաթյուրմանը խոչընդոտող մրցակցային օրենսդրության առկայությունը եւ արդյունավետ կիրառումը:

Կապի թողունակությունը

8. Կողմերը պետք է ձգտեն որոշելու գնագոյացման միասնական մոտեցում կապի թողունակության ծառայությունների համար:

9. Կողմերը ձեռնարկում են բոլոր անհրաժեշտ միջոցները Կողմերի էլեկտրակապի օպերատորների կողմից կապի անխոչընդոտ թողունակության ապահովման համար, ներառյալ՝ տարանցիկը, միջօպերատորային պայմանագրերի հիման վրա՝ հաշվի առնելով ցանցերի տեխնիկական հնարավորությունները:

Հակամրցակցային խաչաձեւ սուբսիդավորումը

10. Կողմերն ապահովում են տեղական եւ միջքաղաքային էլեկտրակապի ծառայությունների սուբսիդավորումից հրաժարումը իրենց տարածքում միջազգային զանգը ավարտելու հաշվին:

Կողմերը ձեռնամուխ կլինեն սույն կետի իրականացմանը 2013 թվականի հունվարի 1-ից:

Սահմանափակ պետական ռեսուրսների կարգավորումը

11. Ռադիոհաճախականության տիրույթի ռեսուրսների, ինչպես նաեւ համարակալման ռեսուրսի բաշխումը եւ օգտագործումն իրականացվում են Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան:

Ունիվերսալ ծառայությունները

12. Կողմերը երաշխավորում են էլեկտրակապի ունիվերսալ ծառայությունների մատուցում իրենց պետությունների տարածքում տվյալ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից նախատեսված միասնական սկզբունքների եւ կանոնների հիման վրա: Յուրաքանչյուր Կողմ իրավունք ունի ինքնուրույն որոշել ունիվերսալ ծառայությունների մասով պարտավորությունները: Այդ պարտավորությունները չեն դիտարկվելու որպես հակամրցակցային պայմանով, որ վերջիններս իրականացվելու են մրցակցության տեսանկյունից թափանցիկության, ոչ խտրական լինելու եւ մրցակցության տեսանկյունից չեզոքության հիման վրա եւ չեն լինի առավել ծանրաբեռնող քան անհրաժեշտ է տվյալ Կողմի կողմից որոշված ունիվերսալ ծառայության տեսակի համար:

Կարգավորող մարմնի անկախությունը

13. Կողմերի կարգավորող մարմինները համարվում են էլեկտրակապի օպերատորներից անկախ եւ հաշվետու չեն վերջիններիս: Շուկայի բոլոր մասնակիցների առնչությամբ այդպիսի մարմինների որոշումները պետք է կրեն անկողմնակալ բնույթ:

**ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ
ԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ
(ԱՌԱՎԵԼ ԲԱՐԵՆՊԱՍՏ ՌԵԺԻՄԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ)
ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բելառուսի Հանրապետություն

| Ոլորտ/Ենթաօլորտ | 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պարտավորությունների հետ անհամատեղելի միջոցի նկարագրությունը | Հիմքը | Գործողության ժամկետը |
|--------------------------------------|--|---|-------------------------------------|
| Տեսալսողական ծառայությունները | <p>Գործող կամ հետագա համաձայնագրերով նախատեսված միջոցներ հետեւյալի առնչությամբ՝</p> <p>1. Տեսալսողական արտադրանքի, հեռուստահաղորդումների եւ ռադիոհաղորդումների արտադրման, տարածման, ցուցադրման, հաղորդման կամ փոխանցման այլ նման ձեւեր.</p> <p>2. Հաղորդման միջոցով արտադրություն եւ տարածում կամ տեսալսողական ստեղծագործությունների, հեռուստահաղորդումների եւ ռադիոհաղորդումների փոխանցման այլ նման</p> | <p>Գործող եւ հետագա համապատասխան համաձայնագրերի բոլոր կողմերը եւ բոլոր այն երկրները, որոնց հետ մշակութային համագործակցությունը ցանկալի է</p> <p>Ֆիլմերի համատեղ արտադրության մասին եվրոպական կոնվենցիա եւ այն երկրները, որոնց հետ կնքվել եւ/կամ կարող են կնքվել համատեղ</p> | <p>Որոշված չէ</p> <p>Որոշված չէ</p> |

| Ոլորտ/Ենթաօլորտ | 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պարտավորությունների հետ անհամատեղելի միջոցի նկարագրությունը | Հիմքը | Գործողության ժամկետը |
|---|--|--|----------------------|
| | <p>ծեւեր, որոնք բավարարում են ծագման չափանիշները եւ համապատասխան համաձայնագրերով սահմանված այլ չափանիշները.</p> <p>3. Միջոցներ, որոնք երաշխավորում են տեսալսողական ստեղծագործությունների ներառյալ, հեռուստատեսայինների եւ ռադիոհաղորդումների համար աջակցման ծրագրերում մասնակցությունից առավելություններ, ինչպես նաեւ առավելություններ այդպիսի ստեղծագործությունների մատակարարներին ծագման որոշակի չափանիշները պահպանման պայմանով:</p> | <p>արտադրության մասին երկկողմ համաձայնագրեր:</p> <p>Անդրսահմանային հեռուստատեսության մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա, Ֆիլմերի համատեղ արտադրության մասին եվրոպական կոնվենցիա կամ այլ եվրոպական երկրներ, որոնց հետ կարող են կնքվել երկկողմ համաձայնագրեր</p> | Որոշված չէ |
| ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ | | | |
| <p>Ավտոմոբիլային տրանսպորտ</p> <p>Միջազգային ավտոմոբիլային ուղեւորափոխադրումներ եւ բեռնափոխադրումներ</p> | <p>Ավտոտրանսպորտային ծառայությունների շուկայից օգտվելու հնարավորությունների մասին գործող եւ ապագա համաձայնագրերով նախատեսված միջոցներ, այդ թվում նաեւ</p> | Գործող եւ ապագա համաձայնագրերի բոլոր կողմերը | Որոշված չէ |

| | | | |
|--|---|--|---|
| | <p>նախատեսված տեսալսողական ստեղծագործությունների վերաբերյալ</p> <p>Ծագման չափանիշները բավարարող տեսալսողական ծառայությունների մատուցողների եւ տեսալսողական ստեղծագործությունների համար օժանդակ ծրագրերին լրավճարներ տրամադրող միջոցներ</p> | <p>Բոլոր երկրները</p> | <p>Որոշված չէ</p> |
| <p>ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</p> | | | |
| <p>Ծովային տրանսպորտ</p> | <p>Ղազախստանի Հանրապետության դրոշի ներքո նավարկող նավերի կողմից իրականացվող կաբոտաժ: Կաբոտաժն իրականացվում է օտարերկրյա պետության դրոշի ներքո նավարկող նավերի կողմից</p> <p>Ղազախստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով լիազորված մարմնի կողմից տրված թույլտվության հիման վրա:</p> <p>Կասպից ծովում նավարկելու հատուկ ռեժիմ</p> <p>Նավագնացության ընկերությունների հիմնադրման եւ գործունեության</p> | <p>Բոլոր երկրները</p> <p>Ադրբեջան, Պարսկաստան, Ռուսաստան, Թուրքմենստան</p> <p>Մեկ կողմից Ղազախստանի Հանրապետության եւ մյուս կողմից</p> | <p>Որոշված չէ</p> <p>Որոշված չէ</p> <p>Որոշված չէ</p> |

| | | | |
|---|--|--|------------|
| | իրականացման առնչությամբ միջոցները | Եվրոպական համայնքի եւ վերջինիս անդամ պետությունների միջեւ գործընկերության եւ համագործակցության համաձայնագիր: Եվրոպական միության երկրները: Գործող եւ ապագա համաձայնագրերի բոլոր կողմերը | |
| Ներքին ջրային տրանսպորտ ա) ուղեւորափոխադրումներ բ) բեռնափոխադրումներ | Միջոցներ, որոնք ապահովում են Իռլի Իլի գետերի ջրամբարներում բեռնափոխադրումների եւ ուղեւորափոխադրումների առնչությամբ արտոնյալ ռեժիմ: | Գործող եւ ապագա համաձայնագրերի բոլոր կողմերը | Որոշված չէ |
| Օդային տրանսպորտային ծառայություններ Վաճառք եւ շուկայահանում | Ընկերության հիմնադրման եւ ներկայացուցչությունների բացման առնչությամբ փոխադարձության հիման վրա ձեռնարկվող միջոցները: | Օդային փոխադրումների վերաբերյալ գործող եւ ապագա համաձայնագրերի բոլոր կողմերը | Որոշված չէ |
| Ավտոմոբիլային տրանսպորտ (բեռնափոխադրումներ եւ ուղեւորափոխադրումներ) | Դրույթներ, որոնք նախատեսված են ավտոմոբիլային փոխադրումների մասին գործող կամ ապագա համաձայնագրերով (ներառյալ համակցված փոխադրումներ՝ երկաթուղային/ավտոմոբիլային), որոնք կնքվել են Ղազախստանի Հանրապետության եւ Երրորդ պետությունների միջեւ, որոնք՝ պահպանում կամ սահմանափակում են տրանսպորտային | Գործող եւ ապագա համաձայնագրերի բոլոր կողմերը | Որոշված չէ |

| | | | |
|--|--|--|--|
| | <p>ծառայությունների տրամադրումը պայմանավորվող կողմերի միջև կամ պայմանավորվող կողմերի տարածքով այն տրանսպորտային միջոցների առնչությամբ, որոնք գրանցված են պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրում. - նման տրանսպորտային միջոցների համար տրամադրում են հարկային արտոնություններ:</p> | | |
|--|--|--|--|

Ռուսաստանի Դաշնություն

| Ոլորտ/Ենթա- ոլորտ | 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված պարտավորությունների հետ անհամատեղելի միջոցի նկարագրությունը | Հիմքը | Գործողության ժամկետը |
|-------------------------------------|---|--|-------------------------------------|
| 1 Ոլորտ/ենթաօլորտ | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը Սահմանափակումներ՝ նորմատիվ իրավական ակտեր | 4 Սահմանափակման կիրառման հիմքը. | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--|--|---|---|---|
| կարգավորման ծառայությունները | | | | |
| ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ | Սահմանափակումներ չկան | - | - | |
| ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | Սահմանափակում ըստ 9-րդ և 10-րդ հոդվածի | Գիդ կարող է լինել բացառապես Ռուսաստանի Դաշնության քաղաքացին | | Որոշված չէ |
| ԱԶԱՏ ԺԱՄԱՆՑԻ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ հետեւյալի առնչությամբ՝ - Զվարճանքների կազմակերպման ծառայությունների - Տեղեկատվական գործակալությունների ծառայությունների | Սահմանափակումներ չկան | - | - | - |
| ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ հետեւյալի առնչությամբ՝ | | | | |
| Ծառայություններ ծովային տրանսպորտի ոլորտում Միջազգային փոխադրումներ, բացառությամբ՝ 1) ուղեւորների և բեռների ներքին կաբոտաժ 2) Ռուսաստանի Դաշնությունում գտնվող նավահանգստի Ռուսաստանի Դաշնության մայրցամաքային | Սահմանափակում ըստ 9-րդ հոդվածի | Արտադրանքի բաժանման մասին համաձայնագրով նախատեսված աշխատանքներին, որպես փոխադրողներ, մասնակցելու արտոնյալ իրավունքը պատկանում է Ռուսաստանում գրանցված իրավաբանական անձանց | «Արտադրանքի բաժանման վերաբերյալ համաձայնագրերի մասին»1995 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 225-Փ3 դաշնային օրենք | Սահմանված չէ |

| 1 Ոլորտ/ենթաօլորտ | 2 Սահմանափակ ման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը Սահմանափակումնե ր՝ նորմատիվ իրավական ակտը | 4 Սահմանափակման կիրառման հիմքը. | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--|---|--|---------------------------------------|---|
| Ելուստում տեղակայված կառույցների կամ կառուցվածքների միջև ուղեուրների եւ բեռների կաբուտաժի | | | | |
| Ծովային բեռնատար տրանսպորտային- էքսպեդիտորական գործակալությունների ծառայություններ | Սահմանափակ ումներ չկան | - | - | - |
| Ծովային գործակալությունների ծառայություններ | Սահմանափակ ումներ չկան | - | - | - |
| Ներքին ջրային տրանսպորտի օժանդակ ծառայություններ (սանիտարական մշակման մասով) | Սահմանափակ ումներ չկան (տեխնիկական հնարավորությ ան առկայության դեպքում) | - | - | - |
| Ավիացիոն տրանսպորտի ոլորտում ծառայություններ հետեւյալի առնչությամբ՝ | | | | |
| Ինքնաթիռների վերանորոգման եւ շահագործման համար սպասարկման աշխատանքների Ավիատրանսպորտային ծառայությունների վաճառքի եւ շուկայահանման Համակարգչային պահեստավորման համակարգերի | Սահմանափակ ումներ չկան | - | - | - |
| Ավտոճանապարհային տրանսպորտի համար սարքավորման տեխնիկական սպասարկում եւ նորոգում | Սահմանափակ ումներ չկան | - | - | - |

| 1 Ոլորտ/ենթաօլորտ | 2 Սահմանափակ ման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը Սահմանափակումնե ր՝ նորմատիվ իրավական ակտը | 4 Սահմանափակման կիրառման հիմքը. | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|---|---|--|---------------------------------------|---|
| Օժանդակ ծառայություններ ավտոճանապարհային տրանսպորտի համար միայն ավտոբուսային կայանների առնչությամբ եւ «ավտոճանապարհային տրանսպորտի համար այլ օժանդակ ծառայությունների» | Սահմանափակ ումներ չկան (տեխնիկական հնարավորությ ան առկայության դեպքում) | - | - | - |

<*> «Առաքում» հասկացությունը ներառում է հավաքումը, տեսակավորումը, փոխադրումը եւ տեղ հասցնելը:

<***> «Առաքում» հասկացությունը ներառում է հավաքումը, տեսակավորումը, փոխադրումը եւ տեղ հասցնելը:

<***> Էքսպրես-առաքման (արագացված) ծառայությունները, ի լրումն գրավոր նամակագրության (այսինքն՝ նամակների կամ փոստային քարտերի) զգալիորեն առավել բարձր սակագների, ինչպես նաեւ բարձր արագության եւ առաքման բարձր հուսալիության, կարող են ներառել արժեքն ավելացնող տարրեր, ինչպիսիք են՝ անմիջապես ուղարկման վայրից ուղարկման ընդունումը, անձնական առաքումը հասցեատիրոջը, տեղաշարժման հսկողությունը (մոնիտորինգը), առաքման ընթացքում նշանակման վայրի եւ հասցեատիրոջ փոփոխության հնարավորությունը, ստացման հաստատումը: Գրավոր նամակագրության առաքման զգալիորեն առավել բարձր սակագներն այն սակագներն են, որոնք ավելի քան հինգ անգամ գերազանցում են ազգային փոստային օպերատորի՝ գրավոր նամակագրության առաքման պետական սակագնի բազային դրույքը առավել հրատապ առաքման կատեգորիայի առաջին կշռում:

Ծանոթագրություն՝ Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում Կողմերը կանցկացնեն խորհրդակցություններ օդային ծառայությունների եւ ավտոմոբիլային բեռնատար տրանսպորտի ծառայությունների մատուցման կարգավորող պայմանների մասին:

**ՀԻՄՆԱԴԻՄԱՆ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԿՈՂՄԵՐԻ
ԿՈՂՄԻՑ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿԸ**
**(ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ՀԱՄԱՁԱՅՆ, ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԱՆԴԱՄ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 4-ՐԴ ԵՎ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ
ՀԱՄԱՁԱՅՆ)**

Բելառուսի Հանրապետություն

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|---|---|--|---|
| 1. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) | Մուտքի պայմանները եւ կարգը, ներառյալ լրավճարների եւ պետական օժանդակության այլ միջոցների նկատմամբ այդպիսի մուտքի սահմանափակումները սահմանվում են Բելառուսի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից | Բելառուսի Հանրապետության բյուջետային օրենսգիրք, Բելառուսի Հանրապետության հարկային օրենսգիրք, «Իրավաբանական անձանց եւ անհատ ձեռներեցների պետական աջակցության տրամադրման կարգի իրավական կարգավորման բարելավման մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի մարտի 28-ի թիվ 182 հրամանագիր | Սահմանված չէ |
| 2. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 2-րդ կետի | Բելառուսի Հանրապետությունում մասնավոր նոտար կարող է լինել Բելառուսի Հանրապետության քաղաքացին: | «Նոտարիատի եւ նոտարական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի 25-րդ, 27-րդ հոդվածները «Բելառուսի Հանրապետությունում պետական ծառայության մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի 24-րդ, 33-րդ, 40-րդ հոդվածները «Գործունեության առանձին տեսակների լիցենզավորման | Սահմանված չէ |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|---|---|---|---|
| | | | <p>մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2010 թվականի սեպտեմբերի 1-ի թիվ 450 հրամանագրով հաստատված գործունեության առանձին տեսակների լիցենզավորման մասին դրույթի 435, 437 կետերը</p> <p>«Նոտարիատի եւ նոտարական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի 27, 32-րդ հոդվածները</p> <p>«Բելառուսի Հանրապետությունում պետական ծառայության մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի 24-րդ, 33-րդ, 40-րդ հոդվածները</p> | |
| 3. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 2-րդ կետի | Որպես արտոնագրային հավատարմատար կարող է գրանցվել Բելառուսի Հանրապետության քաղաքացին: | | Սահմանված չէ |
| 4. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Այն դեպքում եթե օտարերկրյա կապիտալի մասնակցությունը չափը (քվոտան) ապահովագրական կանոնադրական կապիտալում գերազանցում է 30%-ը, ապա Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարությունը դադարեցնում է ապահովագրական գործունեություն իրականացնելու համար լիցենզիաների տրամադրումը այն կազմակերպություններին, որոնք կամ օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպությունների) դուստր ընկերություններն են կամ որոնց կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողները ունեն ավելի քան 49% բաժնեմաս: Ապահովագրական ընկերությունը պարտավոր է ստանալ Բելառուսի Հանրապետության ֆինանսների նախարարության նախնական | «Ապահովագրական գործունեության մասին» Բելառուսի Հանրապետության նախագահի 2006 թվականի օգոստոսի 25-ի թիվ 530 հրամանագիր | Սահմանված չէ |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|---------------------------|---|---|---|
| | | <p>թույլտվությունը օտարերկրյա ներդրողների եւ/կամ վերջիններիս դուստր ընկերությունների միջոցների հաշվին իր կանոնադրական կապիտալի չափերի ավելացման համար, օտարերկրյա, օտարերկրյա ներդրողների օգտին իր բաժնետոմսերի (կանոնադրական կապիտալում բաժնեմասի) օտարման միջոցով (այդ թվում նաեւ օտարերկրյա ներդրողներին վաճառքի միջոցով), իսկ բելառուսական բաժնետերերը (մասնակիցները)՝ օտարերկրյա ներդրողների եւ/կամ վերջիններիս դուստր ընկերությունների օգտին ապահովագրական կազմակերպության՝ իրենց պատկանող բաժնետոմսերի (կանոնադրական կապիտալում բաժնեմասի) օտարման միջոցով: Այն ապահովագրական ընկերություններին, որոնք օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպություններ) դուստր ընկերություններ են կամ որոնց կանոնադրական կապիտալի ավելի քան 49 %ը պատկանում է օտարերկրյա ներդրողների կամ որոնք նշված գործարքների արդյունքում այդպիսին են դառնում չի կարելի մերժվել նշված նախնական թույլտվության տրամադրումը, եթե սույն կետով սահմանվող չափը (քվտան) դրանք կատարելիս չգերազանցվի:</p> <p>Օտարերկրյա ներդրողների կողմից իրենց պատկանող ապահովագրական ընկերությունների բաժնետոմսերի (կանոնադրական կապիտալում բաժնեմասի) համար վճարումը կատարվում է բացառապես դրամային արտահայտությամբ Բելառուսի Հանրապետության արժույթով: Այն ապահովագրական ընկերությունները, որոնք օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպությունների) դուստր ընկերություններ են կամ որոնց կանոնադրական կապիտալի ավելի</p> | | |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|---------------------------|--|---|---|
| | | <p>քան 49%-ը պատկանում է օտարերկրյա ներդրողների, կարող են ստեղծել առանձնացված ենթաբաժիններ Բելառուսի Հանրապետության տարածքում, ինչպես նաև լինել այլ ապահովագրական ընկերությունների հիմնադիրներ (մասնակիցներ) դրավերաբերյալ Բելառուսի Հանրապետության Ֆինանսների նախարարության նախնական թույլտվությունը ստանալուց հետո: Նշված նախնական թույլտվությունը մերժվում է, եթե Բելառուսի Հանրապետության ապահովագրական ընկերություններում օտարերկրյա կապիտալի մասնակցության չափը (քվոտան) գերազանցվում է: Այն ապահովագրական ընկերությունը, որը օտարերկրյա ներդրողի (հիմնական կազմակերպության) դուստր ընկերություն է, իրավունք ունի իրականացնել Բելառուսի Հանրապետությունում ապահովագրական գործունեություն, եթե օտարերկրյա ներդրողը (հիմնական կազմակերպությունը) 15 տարուց ոչ պակաս համարվում է ապահովագրական ընկերություն, որն իր գործունեությունն իրականացրել է համապատասխան պետության օրենսդրությանը համապատասխան ելերկու տարուց ոչ պակաս մասնակցում է Բելառուսի Հանրապետության տարածքում ստեղծված ապահովագրական ընկերությունների գործունեությանը: Այն ապահովագրական ընկերությունները, որոնք օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպությունների) դուստր ընկերություններ են կամ որոնց կանոնադրական կապիտալի ավելի քան 49%-ը պատկանում է օտարերկրյա ներդրողների Բելառուսի Հանրապետությունում չեն կարող իրականացնել կյանքի ապահովագրություն, պարտադիր ապահովագրություն, այդ թվում նաև</p> | | |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|---|--|--|---|
| | | պարտադիր պետական ապահովագրություն, գույքային ապահովագրություն, կապված պետական կարիքների համար մատակարարումների իրականացման կամ կապալային աշխատանքների կատարման հետ, ինչպես նաև Բելառուսի Հանրապետության եւ նրա վարչատարածքային միավորների գույքային շահերի ապահովագրում: | | |
| 5. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի(հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Բելառուսական իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական (պահեստային) կապիտալում օտարերկրյա անձանց բաժնեմասը (կամ նրանց համակցված բաժնեմասը) կազմում է ավելի քան 50 տոկոս, կարող են տնօրինել գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ բացառապես վարձակալության իրավունքով: Այդպիսի վարձակալությունների ժամկետը չի կարող գերազանցել 49 տարին: | | Սահմանված չէ |
| 6. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Թանկարժեք մետաղների գտարկում իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների ցանկը ինչպես նաև վերջիններիս աշխատակարգը սահմանվում է Բելառուսի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով: | | Սահմանված չէ |
| 7. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Բելառուսի Հանրապետության փաստաբանը կարող է լինել Բելառուսի Հանրապետության քաղաքացին: | Բելառուսի Հանրապետության «Փաստաբանության մասին» օրենքի 7-րդ հոդված | Սահմանված չէ |
| 8. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Մասնավոր հետախուզական եւ պահնորդական գործունեությունը Բելառուսի Հանրապետությունում կարող են իրականացնել բացառապես Բելառուսի Հանրապետության իրավաբանական եւ ֆիզիկական անձինք: | | Սահմանված չէ |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|---|---|---|---|
| 9. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի | Սահմանափակումները կիրառվում են ցանկացած Կողմի անձի կողմից Բելառուսի Հանրապետությունում հիմնադրման նկատմամբ միջուկային էներգետիկայի եւ ռադիոակտիվ նյութերի մշակման ոլորտում գործունեություն եւ գործառնություններ իրականացնելու համար: | | Սահմանված չէ |
| 10. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կադաստրային գործունեությունը Բելառուսի Հանրապետությունում կարող է իրականացվել բացառապես Բելառուսի Հանրապետության անձանց կողմից: | | Սահմանված չէ |
| 11. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի | Ապահովագրական գործակալներ, ապահովագրական բրոքերներ կարող են լինել բացառապես Բելառուսի Հանրապետության անձինք: | | Սահմանված չէ |
| 12. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | <p>Օտարերկրյա ներդրումներով վարկային կազմակերպությունների ստեղծման համար անհրաժեշտ է ստանալ Ազգային բանկի նախնական թույլտվություն: Ազգային բանկը դադարեցնում է օտարերկրյա ներդրումներով բանկերին բանկային գործառնությունների իրականացնելու համար լիցենզիաների տրամադրումը Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քվոտային հասնելու դեպքում:</p> <p>Ազգային բանկն իրավունք ունի ձեռնարկել ցանկացած միջոցներ տվյալ սահմանափակման պահպանման համար: Թույլտվության տրամադրման հարցն ուսումնասիրելիս հաշվի է առնվում Բելառուսի Հանրապետության բանկային համակարգում օտարերկրյա կապիտալի մասնակցության քվոտայի օգտագործման մակարդակը, ինչպես նաեւ ոչ ռեզիդենտ հիմնադիրների ֆինանսական դիրքը եւ գործարար համբավը:</p> | | Սահմանված չէ |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|---|--|---|---|
| 13. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի | Բելառուսի Հանրապետության նավահանգիստների միջեւ տեղեկացվածությամբ փոխադրումները եւ բուքսիրումը (կաբոտաժ) իրականացվում է Բելառուսի Հանրապետության պետական դրոշի ներքո նավարկող նավերի կողմից, բացառությամբ բելառուսական միջազգային ռեեստրում գրանցված եւ Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձանց պատկանող նավերի, որոնց կանոնադրական կապիտալի ավելի քան 49 տոկոսը պատկանում է օտարերկրյա ներդրողների Օտարերկրյա քաղաքացիները չեն կարող զբաղեցնել Բելառուսի Հանրապետության պետական դրոշի ներքո նավարկող նավերի նավապետի, նավապետի ավագ օգնականի, ավագ մեխանիկի եւ ռադիո-մասնագետի պաշտոն. նավատարներ (լոցմաններ) կարող են լինել միայն Բելառուսի Հանրապետության քաղաքացիները: | | Սահմանված չէ |
| 14. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Բելառուսի Հանրապետության մայրցամաքային ելուստի սահմաններում գործունեության նկատմամբ կարող են մտցվել սահմանափակումներ: | | Սահմանված չէ |
| 15. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Կոնկրետ տարածքում կամ ակվատորիայում կենդանական աշխարհից օգտվելու նախապատվությունը տրվում է Բելառուսի Հանրապետության քաղաքացիներին: | | Սահմանված չէ |
| 16. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | 1. Օտարերկրյա քաղաքացիներ չի կարող լինել զանգվածային լրատվության միջոցների հիմնադիր (համահիմնադիր): 2. Օտարերկրյա իրավաբանական անձինք, Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձը, որոնց կանոնադրական ֆոնդում օտարերկրյա ներդրումների | | Սահմանված չէ |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|---|---|---|---|
| | | <p>բաժնեմասը կազմում է 50 տոկոս եւ ավելի, իրավունք չունեն հանդես գալ որպես հեռուստա-, տեսահաղորդումների հիմնադիրներ:</p> <p>3. Օտարերկրյա քաղաքացին, օտարերկրյա իրավաբանական անձը, բելառուսական իրավաբանական անձը, որի կանոնադրական ֆոնդում օտարերկրյա ներդրումների բաժնեմասը կազմում է 50 տոկոս եւ ավելի իրավունք չունի հիմնադրել իրավաբանական անձ, որի վրա դրված են հեռուստահաղորդումների խմբագրման գործառույթներ, որը իրականացնում է հեռուստատեսային հեռարձակում, որը ընդգրկում է մի տարածք, որտեղ բնակվում է Բելառուսի Հանրապետության բնակչության թվի կեսը եւ ավելին:</p> <p>4. Հեռուստահաղորդման, տեսահաղորդման հիմնադրի կողմից բաժնետոմսերի (բաժնեմասերի) օտարումը՝ այդ թվում նաեւ դրա պետական գրանցումից հետո իրավաբանական անձի կողմից, որի վրա դրված են հեռուստահաղորդումների խմբագրման գործառույթներ, որոնք իրականացնում են հեռուստատեսային հեռարձակում, որը ընդգրկում է մի տարածք, որտեղ բնակվում է Բելառուսի Հանրապետության բնակչության թվի կեսը եւ ավելին, ինչը հանգեցրել է իրենց կանոնադրական ֆոնդում օտարերկրյա բաժնեմասի (ավանդ) հայտնվելուն, ինչը կազմում է 50 եւ ավելի տոկոս, չի թույլատրվում:</p> <p>5.</p> | | |
| 17. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ի կետի | Աուդիտորական ծառայությունների առնչությամբ՝ առետրային կազմակերպությունը կարող է ստեղծվել ցանկացած կազմակերպատիրավական ձեռով՝ բացառությամբ բաց բաժնետիրական ընկերության, պետական կամ մունիցիպալ ունիտար ընկերություն: | | Սահմանված չէ |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|---|---|---|---|
| 18. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի եւ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Բելառուսի Հանրապետությունում ֆինանսական ծառայությունների ոլորտում գործունեություն իրականացնելու համար լիցենզիան տրամադրվում է Բելառուսի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կազմակերպարավական ձեռնարկով՝ Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձանց: | | Սահմանված չէ |
| 19. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 3-րդ կետի | Օտարերկրյա ներդրումներով վարկային կազմակերպությունների առնչությամբ՝ եթե բելառուսական վարկային կազմակերպության միանձնյա գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձն օտարերկրյա քաղաքացի է կամ առանց քաղաքացիության անձ է, այդպիսի վարկային կազմակերպության կոլեգիալ գործադիր մարմինը ոչ պակաս քան 50 տոկոսով պետք է ձեռնարկված լինի Բելառուսի Հանրապետության քաղաքացիներից: Բելառուսի Հանրապետության քաղաքացի աշխատակիցների թիվը պետք է կազմի օտարերկրյա ներդրումներով բելառուսական վարկային կազմակերպության աշխատողների ընդհանուր թվի 75 տոկոսից ոչ պակաս: | | Սահմանված չէ |
| 20. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 3-րդ կետի | Բելառուսական ապահովագրական գործի-իրավաբանական անձի սուբյեկտի ղեկավարները (այդ թվում նաեւ միանձնյա գործադիր մարմինը) եւ գլխավոր հաշվապահը պետք է մշտապես բնակվեն Բելառուսի Հանրապետության տարածքում: | | Սահմանված չէ |
| 21. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի | 1. Ավիացիոն կազմակերպությունում, որը իրականացնում է ավիացիոն տեխնիկայի մշակման, արտադրության, փորձարկման, նորոգման եւ (կամ) օգտագործման գործունեություն իրականացնող ավիացիոն կազմակերպությունում օտարերկրյա կապիտալի | | Սահմանված չէ |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|--|--|---|---|
| | | <p>մասնակցությունը թույլատրվում է պայմանով, որ օտարերկրյա կապիտալի մասնակցությունը կազմում է ավելի քիչ քան ավիացիոն կազմակերպության կանոնադրական կապիտալի 25 տոկոսը կամ Բելառուսի Հանրապետության նախագահի որոշմամբ: այդպիսի կազմակերպության ղեկավարներ կամ կառավարման մարմնում ընդգրկված անձինք կարող են լինել բացառապես Բելառուսի Հանրապետության քաղաքացիները, եթե Բելառուսի Հանրապետության նախագահի որոշմամբ այլ բան սահմանված չէ:</p> <p>1.Օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ավիացիոն կազմակերպություն Բելառուսի Հանրապետության տարածքում ստեղծելը թույլատրվում է պայմանով, որ օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժնեմասը չի գերազանցում ավիացիոն կազմակերպության կանոնադրական կապիտալի 49 տոկոսը, վերջինիս ղեկավարը Բելառուսի Հանրապետության քաղաքացի է եւ օտարերկրյա քաղաքացիների թիվը ավիացիոն կազմակերպության ղեկավար մարմնում չի գերազանցում ղեկավար մարմնի կազմի մեկ երրորդը:</p> <p>Օտարերկրյա ավիացիոն կազմակերպությունները կարող են բացել իրենց ներկայացուցչությունները Բելառուսի Հանրապետության տարածքում Բելառուսի Հանրապետության օրենսդրության եւ (կամ) Բելառուսի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան:</p> | | |
| 22. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Բնակարանային-կոմունալ ծառայությունների, ջրօգտագործման եւ ջրամատակարարման ոլորտում գործունեության իրականացման հետ կապված պայմանագրերը կնքվում են | | Սահմանված չէ |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|--|---|---|---|
| | | իրավաբանական անձի հետ: Պայմանագրերի թիվը կարող է սահմանափակվել՝ ելնելով տեղական պահանջներից: | | |
| 23. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Բացառիկ կոնցեսիոներ նշանակելու իրավունքը պահպանվում է: Կոնցեսիոնտի առանձին իրավունքները եւ պարտավորությունները կարող են իրականացվել կոնցեսիոնտի կողմից լիազորվածների կողմից: | | Не определен |
| 24. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Այն գործունեությունը, որի իրականացման համար պահանջվում է լիցենզիա, կարող է իրականացվել բացառապես Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձանց կողմից կամ Բելառուսի Հանրապետությունում սահմանված կարգով գրանցված անհատ ձեռնարկատերերի կողմից: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները որոշվում են Բելառուսի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան: | | Սահմանված չէ |
| 25. | Սահմանափակում ըստ 5-րդ հոդվածի 1-ին կետի | Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեությունը բույսերի կուլտիվացիայի մասով, որոնք օգտագործվում են թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտադրության, վերամշակման, , բաշխման եւ ոչնչացման համար,, կարող է իրականացվել բացառապես պետական ունիտար ձեռնարկությունների կողմից: | | Սահմանված չէ |
| 26. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Բելառուսի Հանրապետությունից դուրս Բելառուսի Հանրապետության քաղաքացիների աշխատանքի տեղավորման հետ կապված գործունեությունը կարող է իրականացվել Բելառուսի Հանրապետության անհատ ձեռներեցների կողմից: | | Սահմանված չէ |

| 1 № | 2 Սահմանափակման տեսակը | 3 Սահմանափակման նկարագրությունը | 4 Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | 5 Սահմանափակման գործողության ժամկետը |
|--------|--|--|---|---|
| 27. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի եւ 4-րդ հոդվածի | Տիեզերական գործունեությունը կարող է իրականացվել բացառապես Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձանց կողմից: | | Սահմանված չէ |
| 28. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի | Բորսայի յուրաքանչյուր հիմնադրի կամ անդամի կանոնադրական կապիտալում բաժնեմասը չի կարող գերազանցել տասը տոկոսը: | | Սահմանված չէ |
| 29. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կրթության ոլորտում գործունեությունն իրականացվում է Բելառուսի Հանրապետության իրավաբանական անձանց կողմից, որոնք ոչ առետրային կազմակերպություններ են: | | Սահմանված չէ |

Ղազախստանի Հանրապետություն

| N | Սահմանափակման տեսակը | Սահմանափակման նկարագրությունը | Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | Սահմանափակ գործողության ժամկետը |
|---|--|---|--|---------------------------------|
| 1 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ի կետի (գործունեության առնչությամբ) | Բյուջետային լրավճարները (սուբսիդիաները) եւ պետական աջակցության այլ միջոցները տրամադրվում են Ղազախստանի Հանրապետության իրավաբանական եւ ֆիզիկական անձանց Ղազախստանի Հանրապետության Կառավարությամբ սահմանված կարգով: | Ղազախստանի Հանրապետության բյուջետային օրենսգիրք | Սահմանված չէ |

| | | | | |
|---|--|--|---|--|
| 2 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ի կետի (գործունեության եւ հիմնադրման առնչությամբ) | Արգելվում է՝ 1. օտարերկրյա անձանց կողմից կապի մայրուղիային գծերի կառավարումը կամ շահագործումը. 2. օտարերկրացիներին եւ օտարերկրյա իրավաբանական անձանց ուղղակիորեն եւ (կամ) անուղղակի կերպով տիրապետել, օգտագործել, տնօրինել եւ (կամ) կառավարել ավելի քան ընդհանուր ձայնի իրավունքով բաժնետոմսերի 49 տոկոսը, ինչպես նաեւ այն իրավաբանական անձի բաժնեմասերը, փայաբաժինները, որը հեռահաղորդակցման ոլորտում իրականացնում է գործունեություն, որպես միջքաղաքային եւ (կամ) միջազգային կապի օպերատոր, որը տնօրինում է կապի ցամաքային (մալուխային, այդ թվում նաեւ թելքաօպտիկական, ռադիոռելեային) գծեր: | «Ազգային անվտանգության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Միջոցը պահպանվում է եւ կիրառվում է մինչեւ 2017 թվականի հունվարի 1-ը բացառությամբ «Ղազախստելեկոմ» բաժնետիրական ընկերության եւ վերջինիս հնարավոր իրավահաջորդների |
| 3 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ի կետի (գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Օտարերկրյա ֆիզիկական եւ իրավաբանական անձինք չեն կարող ուղղակիորեն եւ (կամ) անուղղակի կերպով տիրապետել, օգտագործել, տնօրինել եւ (կամ) կառավարել Ղազախստանի Հանրապետությունում տեղեկատվության զանգվածային միջոցների ներկայացուցչի կամ տվյալ ոլորտում գործունեություն իրականացնող իրավաբանական անձի բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայաբաժինների) փաթեթի ավելի քան 20 տոկոսը: | «Ազգային անվտանգության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքը | Սահմանված չէ |
| 4 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) | Պետական մարմինն իրավունք ունի մերժել Ղազախստանի Հանրապետության ռազմավարական ռեսուրսների օգտագործման գործարքների կատարման համար թույլտվության տրամադրումը, եթե դա կարող է հանգեցնել մեկ երկրի մեկ անձի կամ անձանց խմբերի իրավունքների համակենտրոնացման: Տվյալ պայմանի կատարումը պարտադիր է նաեւ փոխկապակցված անձանց հետ գործարքների առնչությամբ: | «Ազգային անվտանգության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 5 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի | Մինչ Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը Ղազախստանի Հանրապետության եւ ընդերքօգտագործողի միջեւ կնքված ընդերքօգտագործման պայմանագրեր | «Ընդերքի եւ ընդերքօգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |

| | | | | |
|----|---|--|--|--------------|
| 6 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Օտարերկրյա անձանց մասնավոր սեփականությունում չեն կարող գտնվել հողատարածքներ, որոնք նախատեսված են ապրանքային գյուղատնտեսական արտադրության եւ անտառաբուծության համար: Գյուղացիական կամ ֆերմերային (ագարակային) տնտեսության վարման եւ ապրանքային գյուղատնտեսական արտադրության համար ժամանակավոր փոխհատուցվող հողօգտագործման իրավունքը տրվում է օտարերկրյա անձանց մինչեւ 10 տարի ժամկետով: | Ղազախստանի Հանրապետության հողային օրենսգիրք | Սահմանված չէ |
| 7 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) | Չվնասելով Մաքսային միության եւ Եվրոպական տնտեսական տարածքի շրջանակներում Կողմերի կողմից կնքված այլ համաձայնագրերը Ղազախստանի Հանրապետության տարածք (տարածքից) էթիլային սպիրտի եւ ալկոհոլային արտադրանքի ներմուծում եւ արտահանում իրականացնելու իրավունք ունեն լ բացառապես Ղազախստանի Հանրապետության ռեզիդենտ իրավաբանական անձինք: | «Էթիլային սպիրտի եւ ալկոհոլային արտադրանքի արտադրության եւ շրջանառության պետական կարգավորման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-2 կետերը | Սահմանված չէ |
| 8 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 2-րդ կետի | Օտարերկրացիները չեն կարող զբաղեցնել նավապետի, նավապետի ավագ օգնականի եւ ավագ մեխանիկի պաշտոններ: Որպես ծովային նավատարներ կարող են աշխատել միայն Ղազախստանի Հանրապետության քաղաքացիները: | «ջրային տրանսպորտի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք «Առետրային ծովագնացության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 9 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կրթության ոլորտում գործունեությունն իրականացվում է Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձ հանդիսացող կրթական հաստատությունների կողմից: | «Կրթության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 10 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Օտարերկրյա կազմակերպություններն իրականացում են բնակելի շենքերի կառուցման կազմակերպման գործունեություն փայտտերերի գումարների գրավման հաշվին միայն Ղազախստանի Հանրապետության տարածքում իրավաբանական անձի հիմնադրման միջոցով: | «Բնակարանային շինարարության բաժնեմասային մասնակցության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |

| | | | | |
|----|---|---|--|--------------|
| 11 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Բնակարանային-կոմունալ, ջրօգտագործման եւ ջրամատակարարման ոլորտներում գործունեության իրականացման հետ կապված պայմանագրերը կնքվում են իրավաբանական անձի հետ: Պայմանագրերի թիվը կարող է սահմանափակ լինել՝ ելնելով տեղական պահանջներից: | «Բնակարանային հարաբերությունների մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 12 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Պահպանվում է բացառիկ կոնցեսիոներ նշանակելու իրավունքը: Կոնցեսիոնտի առանձին իրավունքները եւ պարտավորությունները կարող են իրականացվել լիազորված կոնցեսիոնտի կողմից: | «Կոնցեսիաների մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 13 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության եւ հիմնադրման առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի | Սահմանափակումները կիրառվում են Ղազախստանի Հանրապետության տարածքում ցանկացած Կողմի անձի կողմից հիմնադրման նկատմամբ միջուկային էներգետիկայի եւ ռադիոակտիվ թափոնների տնօրինման ոլորտներում գործունեության եւ գործառնությունների իրականացման համար: | «Ատոմային էներգիայի օգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 14 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Կարող են մտցվել սահմանափակումներ Ղազախստանի Հանրապետության մայրցամաքային ելուստի սահմաններում գործունեության նկատմամբ: | «Ընդերքի եւ ընդերքօգտագործման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 15 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կանոնադրական կապիտալում հիմնադիրների կամ բորսայի անդամների բաժնեմասը կարող է սահմանափակվել: | «Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 16 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտադրության շրջանառության հետ կապված գործունեությունը բույսերի կուլտիվացիային մասով, որոնք օգտագործվում են թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտադրության, վերամշակման, բաշխման եւ ոչնչացման համար, կարող է իրականացվել բացառապես պետական ձեռնարկությունների կողմից: | «Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, պրեկուրսորների եւ դրանց ապօրինի շրջանառության եւ չարաշահման դեմ ուղղված հակադրման միջոցների մասին» Ղազախստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 10-ի թիվ 279-1 օրենք | Սահմանված չէ |

| | | | | |
|----|---|---|--|--------------|
| 17 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Այն գործունեությունը, որի իրականացման համար պահանջվում է լիցենզիա, կարող է իրականացվել բացառապես Ղազախստանի Հանրապետության իրավաբանական անձանց կամ անհատ ձեռներեցների կողմից: Ղազախստանի Հանրապետությունում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները որոշվում են օրենսդրությանը համապատասխան: | «Լիցենզավորման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 18 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) | Կանոնավոր օդային փոխադրումներ իրականացնող օդանավակայանների, ավիաընկերությունների ավիացիոն անվտանգության ծառայության ղեկավար կարող է լինել բացառապես Ղազախստանի Հանրապետության քաղաքացին: | «Օդային տարածքի օգտագործման եւ ավիացիոն գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 19 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Ոչ կանոնավոր օդային փոխադրումներ եւ ավիացիոն աշխատանքներ իրականացվող շահագործողի ավիացիոն անվտանգության գծով պատասխանատու անձ կարող է լինել միայն Ղազախստանի Հանրապետության քաղաքացին: | «Օդային տարածքի օգտագործման եւ ավիացիոն գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 20 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կանոնավոր օդային փոխադրումներ իրականացնող ավիաընկերությունները ստեղծվում են բաժնետիրական ընկերության ձևով: Ավիաընկերության կանոնադրական կապիտալում օտարերկրացիների եւ (կամ) օտարերկրյա իրավաբանական անձանց մասնակցության բաժնեմասը չպետք է գերազանցի 49 տոկոսը: | «Օդային տարածքի օգտագործման եւ ավիացիոն գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 21 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Անհատ ձեռներեց կարող է լինել միայն Ղազախստանի Հանրապետության քաղաքացին կամ օրավմանը [օտարերկրացին] <*>, որն իրականացնում է անհատ ձեռներեցություն առանց իրավաբանական անձի ձեւավորման: | «Մասնավոր ձեռնարկատիրության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 22 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) | Փաստաբան <*> եւ փաստաբանի փորձնակ կարող է լինել միայն Ղազախստանի Հանրապետության քաղաքացին: | «Փաստաբանական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |

| | | | | |
|----|---|--|---|--------------|
| 23 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Նոտար կամ նոտարի օգնական կարող է լինել բացառապես Ղազախստանի Հանրապետության քաղաքացին: | «Նոտարիատի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 24 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) | Մնանկության ընթացակարգերում անվճարունակ պարտապանների գույքի եւ գործերի կառավարման գործունեությունն իրականացվում է բացառապես Ղազախստանի Հանրապետության քաղաքացիների կողմից: | Մնանկության ընթացակարգերում անվճարունակ պարտապանների գործերի եւ գույքի կառավարման գործունեությանն ներկայացվող լիցենզավորման եւ որակավորման կանոններ: Հաստատված են Ղազախստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 20-ի Թիվ 615 որոշմամբ: | Սահմանված չէ |
| 25 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) | Դատական փորձաքննության մարմիններում դատական փորձագետի պաշտոն կարող է զբաղեցնել բացառապես Ղազախստանի Հանրապետության քաղաքացին: | «Ղազախստանի Հանրապետության դատափորձագիտական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 26 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) | Արտոնագրային հավատարմատար կարող է լինել միայն Ղազախստանի Հանրապետության քաղաքացին: | Ղազախստանի Հանրապետության արտոնագրային օրենք | Սահմանված չէ |
| 27 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Աուդիտորական կազմակերպությունը ստեղծվում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կազմակերպատիրավական ձեւով: | «Աուդիտորական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 28 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Օտարերկրյա մասնակցությամբ իրավաբանական անձինք եւ օտարերկրացիները չեն կարող՝ 1) իրականացնել պահնորդական գործունեության բոլոր տեսակները. 2) հիմնադրել կամ լինել մասնավոր պահնորդական կազմակերպությունների հիմնադիրներ (մասնակիցներ). | «Պահնորդական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |

| | | | | |
|----|---|---|--|-------------|
| | | 3) ունենալ հավատարմագրային կառավարման ներքո մասնավոր պահնորդական կազմակերպություն. 4) ստեղծել անհատ ձեռներեցների եւ իրավաբանական անձանց պահնորդական ստորաբաժանումները: | | |
| 29 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) 4-րդ հոդվածի 2-րդ կետի | Գիդ (գիդ-թարգմանիչ), զբոսաշրջության հրահանգիչ, էքսկուրսավար կարող են լինել միայն Ղազախստանի Հանրապետության քաղաքացիները: | «Ղազախստանի Հանրապետության զբոսաշրջային գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված է |
| 30 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 2-րդ կետի | Ջանգվածային տեղեկատվության միջոցների գլխավոր խմբագիր կարող է լինել միայն Ղազախստանի Հանրապետության քաղաքացի: | «Տեղեկատվության զանգվածային միջոցների մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված է |
| 31 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Բանկերը ստեղծվում են բաժնետիրական ընկերությունների ձեւով: | «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված է |
| 32 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) | Ղազախստանի Հանրապետությունում արգելվում է ոչ ռեզիդենտ բանկերի մասնաճյուղերի բացումը: | «Ղազախստանի Հանրապետությունում բանկերի եւ բանկային գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված է |
| 33 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Արդարադատության մարմիններում հաշվառային գրանցման ամսաթվից երեսուն աշխատանքային օրվա ընթացքում բանկի՝ Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ բանկի ներկայացուցչությունը պետք է լիազորված մարմնին գրավոր ծանուցի բացման մասին: | «Ղազախստանի Հանրապետությունում բանկերի եւ բանկային գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված է |
| 34 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Ապահովագրական (վերաապահովագրական) ընկերությունը պետք է հիմնադրվի բաժնետիրական ընկերության ձեւով: | «Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված է |

| | | | | |
|----|---|---|--|--------------|
| 35 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Արդարադատության մարմիններում գրանցման օրվանից երեսուն աշխատանքային օրվա ընթացքում Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ ապահովագրական (վերաապահովագրական) ընկերության ներկայացուցչությունը պետք է գրավոր ծանուցի բացման մասին լիազոր մարմնին: | «Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 36 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Ղազախստանի Հանրապետությունում արգելվում է ոչ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունների մասնաճյուղերի բացումը: | «Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 37 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Ապահովագրական բրոքերի կազմակերպարավական ձեւ կարող է լինել սահմանափակ պատասխանատվությամբ բաժնետիրական ընկերակցությունը կամ բաժնետիրական ընկերությունը | «Ապահովագրական գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 38 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կուտակային կենսաթոշակային հիմնադրամը ստեղծվում է բաժնետիրական ընկերության ձեւով: | «Կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 39 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կուտակային կենսաթոշակային հիմնադրամների կենսաթոշակային ակտիվների ներդրումային կառավարումն իրականացնող կազմակերպությունը պետք է հիմնադրվի որպես բաժնետիրական ընկերություն եւ լինի արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնակից: | «Կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 40 | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) | Ղազախստանի Հանրապետությունում արգելվում է Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ կուտակային կենսաթոշակային հիմնադրամների մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների բացումը: | «Ղազախստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 41 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Օտարերկրյա մասնակցությամբ բաց կուտակային կենսաթոշակային հիմնադրամների գումարային սեփական կապիտալը չի կարող գերազանցել Ղազախստանի Հանրապետության բոլոր բաց կուտակային կենսաթոշակային | «Ղազախստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության | Սահմանված չէ |

| | | | | |
|----|--|---|--|--------------|
| | | հիմնադրամների ընդհանուր հայտարարված կանոնադրական կապիտալի քսանհինգ տոկոսը: | օրենք | |
| 42 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտի մասնակցությամբ բաց կուտակային կենսաթոշակային հիմնադրամի կառավարման եւ տնօրենների խորհրդի անդամների ոչ պակաս քան մեկ երրորդը պետք է կազմեն Ղազախստանի Հանրապետության քաղաքացիները: Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ՝ բաց կենսաթոշակային հիմնադրամի կառավարման եւ տնօրենների խորհրդի անդամները պարտավոր են ներկայացնել փաստաթղթեր, որոնք վկայում են ֆինանսական շուկայում գործունեություն իրականացնող կազմակերպություններում երեք տարուց ոչ պակաս ղեկավար աշխատանքի փորձի մասին: | «Ղազախստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 43 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կենսաթոշակային ակտիվների ներդրումային կառավարում իրականացնող կազմակերպությունների օտարերկրյա մասնակցությամբ գումարային սեփական կապիտալը չի կարող գերազանցել Ղազախստանի Հանրապետության կենսաթոշակային ակտիվների ներդրումային կառավարում իրականացնող կազմակերպությունների գումարային սեփական կապիտալի 50 տոկոսը: | «Ղազախստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 44 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 2-րդ կետի | Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտի մասնակցությամբ կենսաթոշակային ակտիվների ներդրումային կառավարում իրականացնող կազմակերպության տնօրենների խորհրդի եւ ղեկավար մարմինների առնվազն մեկ երրորդը պետք է կազմեն Ղազախստանի Հանրապետության քաղաքացիները: Կենսաթոշակային ակտիվների ներդրումային կառավարում իրականացնող կազմակերպության տնօրենների խորհրդի եւ ղեկավար մարմինների ոչ ռեզիդենտ անդամները պարտավոր են ներկայացնել փաստաթղթեր, որոնք վկայում են ֆինանսական շուկայում գործունեություն իրականացնող կազմակերպություններում առնվազն երեք տարի ղեկավար | «Ղազախստանի Հանրապետությունում կենսաթոշակային ապահովման մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |

| | | աշխատանքի փորձի մասին: | | |
|----|--|--|---|--------------|
| 45 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Բանկի տեղաբաշխված (հանած արտոնյալ եւ բանկի կողմից գնվածները) բաժնետոմսերի քսանհինգ կամ ավելի տոկոսի ուղղակիորեն տիրապետող կամ բանկի քսանհինգ կամ ավելի տոկոսի ձայնի իրավունքով բաժնետոմսերի ուղղակիորեն քվեարկելու հնարավորություն ունեցող Ղազախստանի Հանրապետության ոչ ռեզիդենտ բանկային հոլդինգ, կարող է լինել միայն ֆինանսական կազմակերպությունը: | «Ղազախստանի Հանրապետությունում բանկերի եւ բանկային գործունեության մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքում փոփոխությունները | Սահմանված չէ |
| 46 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կենտրոնական դեպոզիտարիան Ղազախստանի Հանրապետության տարածքում դեպոզիտորական գործունեություն իրականացնող միակ կազմակերպությունն է: Կենտրոնական դեպոզիտարիան ստեղծվում է բաժնետիրական ընկերության ձեւով: | «Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 47 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Արժեթղթերի շուկայի պրոֆեսիոնալ մասնակիցը՝ իրավաբանական անձ է, որը գործում է բաժնետիրական ընկերության կազմակերպատիրավական ձեւով (բրոքերի եւ (կամ) դիլերի, որը իրավունք չունի վարել հաճախորդների, գրանցում իրականացնող մարմնի, տրանսֆեր-գործակալի հաշիվները:) | «Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |
| 48 | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Ֆոնդային բորսա՝ բաժնետիրական ընկերության կազմակերպատիրավական ձեւով ստեղծված իրավաբանական անձ: | «Արժեթղթերի շուկայի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք | Սահմանված չէ |

<*> Օրալմաններ՝ օտարերկրացիներ կամ Ղազախստանի քաղաքացիության չունեցող անձինք, որոնք այն ժամանակ երբ Ղազախստանի Հանրապետությունը ձեռք է բերել ինքնիշխանություն մշտապես բնակվում էին Ղազախստանի Հանրապետության սահմաններից դուրս եւ որոնք ժամանել են Ղազախստան մշտական բնակության նպատակով:

<***> Փաստաբանի կարգավիճակի առկայությունը պահանջվում է բացառապես քրեական գործեր վարելու համար:

Ռուսաստանի Դաշնություն

| N | Սահմանափակման տեսակը | Սահմանափակման նկարագրությունը | Սահմանափակման կիրառման համար հիմքը. նորմատիվ իրավական ակտը | Սահմանափակման գործողության ժամկետը |
|----|---|--|--|------------------------------------|
| 1. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) | Օգտվելու հնարավորության պայմանները եւ կարգը, ներառյալ լրավճարներից եւ պետական օժանդակության այլ միջոցներից օգտվելու նման հնարավորության սահմանափակումները սահմանվում են պետական դաշնային, տարածքային եւ տեղական կառավարման մարմինների կողմից եւ կիրառվում են լրիվ ծավալով՝ չնայած Համաձայնագրի դրույթներին | Ռուսաստանի Դաշնության Բյուջետային օրենսգիրք, «Դաշնային բյուջեի մասին» դաշնային օրենք համապատասխան տարվա համար, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների եւ մունիցիպալ կազմավորումների համապատասխան նորմատիվ իրավական ակտեր | Սահմանված չէ |
| 2. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 2-րդ կետի մասով | Նոտարներ, ստաժորներ եւ նոտարի օգնականներ կարող են լինել բացառապես Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները: Նոտարական պալատը, նոտարական գրասենյակը կարող է հիմնադրվել բացառապես Ռուսաստանի Դաշնության անձի կողմից: | «Նոտարիատի մասին Ռուսաստանի Դաշնության օրենսդրության հիմունքները» 1993 թվականի փետրվարի 11-ի թիվ 4462-1 օրենք | Սահմանված չէ |
| 3. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 2-րդ կետի մասով | Որպես արտոնագրային հավատարմատար կարող է գրանցվել Ռուսաստանի Դաշնության քաղաքացին | Ռուսաստանի Դաշնության Քաղաքացիական օրենսգիրք | Սահմանված չէ |
| 4. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Եթե ապահովագրական ընկերությունների կանոնադրական կապիտալում օտարերկրյա մասնակցության չափը (քվոտան) գերազանցում է 25 տոկոսը, ապահովագրական | «Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործի կազմակերպման մասին» 1992 | Սահմանված չէ |

մասով

վերահսկողության մարմինը դադարեցնում է այն ապահովագրական ընկերություններին ապահովագրական գործունեության իրականացման համար լիցենզիայի տրամադրումը, որոնք օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպության) դուստր ընկերություններ են կամ իրենց կանոնադրական կապիտալում ունեն 49 տոկոսից ավելի օտարերկրյա ներդրողների բաժնեմաս: Ապահովագրական ընկերությունը պարտավոր է ստանալ ապահովագրական վերահսկողության մարմնի նախնական թույլտվությունը՝ օտարերկրյա ներդրողների միջոցների եւ (կամ) նրանց դուստր ընկերությունների միջոցների հաշվին իր կանոնադրական կապիտալի չափի ավելացման համար, իր բաժնետոմսերը (կանոնադրական կապիտալում իր բաժնեմասը) օտարերկրյա ներդրողի օգտին օտարելու (այդ թվում օտարերկրյա ներդրողներին վաճառելու) համար, իսկ ռուսաստանյան բաժնետերերը (մասնակիցները)՝ ապահովագրական ընկերության՝ իրենց պատկանող բաժնետոմսերը (կանոնադրական կապիտալում բաժնեմասը) օտարերկրյա ներդրողների եւ (կամ) նրանց մասնաճյուղերի օգտին օտարելու համար:

Նշված նախնական թույլտվության տրամադրումը չի կարող մերժվել օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպությունների) դուստր ընկերություններ հանդիսացող կամ իրենց կանոնադրական կապիտալներում օտարերկրյա բաժնետերերի՝ 49 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կամ նշված գործարքների արդյունքում այդպիսին դարձող ապահովագրական կազմակերպություններին, եթե տվյալ կետով սահմանված չափը

թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4015-1 դաշնային օրենք

(քվոտան) չի գերազանցվի այդ գործարքների կատարման դեպքում: Օտարերկրյա ներդրողների կողմից ապահովագրական ընկերությունների՝ իրենց պատկանող բաժնետոմսերի (կանոնադրական կապիտալներում բաժնեմասերի) վճարումը կատարվում է բացառապես դրամային եղանակով՝ Ռուսաստանի Դաշնության արժույթով:

Օտարերկրյա ներդրողների (հիմնական կազմակերպությունների) դուստր ընկերություններ հանդիսացող կամ իրենց կանոնադրական կապիտալներում օտարերկրյա ներդրողների՝ 49 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ապահովագրական կազմակերպությունները, բացի Եվրոպական Միության անդամ պետությունների օտարերկրյա ներդրողների դուստր ընկերություն հանդիսացող կամ իրենց կանոնադրական կապիտալներում օտարերկրյա ներդրողների՝ 49 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից, կարող են իրենց մասնաճյուղերը բացել Ռուսաստանի Դաշնության տարածքում, մասնակցություն ունենալ ապահովագրական դուստր կազմակերպություններում՝ դրա համար ապահովագրական վերահսկողության մարմնի նախնական թույլտվությունը ստանալուց հետո: Նշված նախնական թույլտվությունը մերժվում է, եթե Ռուսաստանի Դաշնության ապահովագրական կազմակերպություններում օտարերկրյա կապիտալի մասնակցության չափը (քվոտան) գերազանցվել է: Օտարերկրյա ներդրողի (հիմնական կազմակերպության) դուստր ընկերություն հանդիսացող ապահովագրական կազմակերպությունը, բացի Եվրոպական Միության անդամ պետությունների օտարերկրյա

ներդրողների դուստր ընկերություն հանդիսացող կամ իրենց կանոնադրական կապիտալներում օտարերկրյա ներդրողների՝ 49 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից, իրավունք ունի Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործունեություն իրականացնել, եթե օտարերկրյա ներդրողը (հիմնական կազմակերպությունը) 15 տարուց ոչ պակաս համարվում է ապահովագրական ընկերություն, որն իր գործունեությունն իրականացնում է համապատասխան պետության օրենսդրության համաձայն եւ երկու տարուց ոչ պակաս մասնակցում է Ռուսաստանի Դաշնության տարածքում ստեղծված ապահովագրական ընկերությունների գործունեության մեջ: Օտարերկրյա ներդրողների (հիմնական ներդրողների) դուստր ընկերություն հանդիսացող կամ իրենց կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների՝ 49 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող ապահովագրական կազմակերպությունները, բացի Եվրոպական Միության անդամ պետությունների օտարերկրյա ներդրողների դուստր ընկերություն հանդիսացող կամ իրենց կանոնադրական կապիտալներում օտարերկրյա ներդրողների՝ 49 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող կազմակերպություններից, Ռուսաստանի Դաշնությունում չեն կարող իրականացնել կյանքի ապահովագրություն, պարտադիր ապահովագրություն, պարտադիր պետական ապահովագրություն, գույքային ապահովագրություն՝ կապված մատակարարումների իրականացման կամ պետական կարիքների համար կապալային աշխատանքների կատարման հետ, ինչպես նաեւ պետական եւ մունիցիպալ կազմակերպությունների գույքային շահերի ապահովագրություն: Չնայած սույն Համաձայնագրի

| | | | | |
|----|--|---|---|--------------|
| | | <p>դրույթներին՝ ապահովագրական ընկերությունները, որոնք ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա են ստացել մինչև Ռուսաստանի՝ ԱՀԿ-ին միանալը, կարող են շարունակել տվյալ գործունեության իրականացումը այն պայմանների համաձայն, որոնցով տրվել է լիցենզիան:</p> | | |
| 5. | <p>Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ), ըստ 5-րդ հոդվածի, 4-րդ հոդվածի 1-ին կետի</p> | <p>Ցանկացած այլ Կողմի անձի կողմից կատարվող եւ երկրի պաշտպանության ու պետության անվտանգության համար ռազմավարական նշանակություն ունեցող գործունեության տեսակներից թեկուզ մեկն իրականացնող ռուսաստանյան տնտեսական ընկերությունների նկատմամբ հսկողության հաստատմանը հանգեցնող գործարքների համար պահանջվում է Ռուսաստանի Դաշնության լիազոր մարմնի թույլտվության ստացումը Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերով սահմանված կարգով:</p> <p>Օտարերկրյա պետությունները, միջազգային կազմակերպությունները, ինչպես նաեւ նրանց հսկողության տակ գտնվող, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության տարածքում ստեղծված անձինք, իրավունք չունեն կատարել գործարքներ, որոնք հանգեցնում են երկրի պաշտպանության ու պետության անվտանգության համար ռազմավարական նշանակություն ունեցող գործունեության տեսակներից թեկուզ մեկն իրականացնող ռուսաստանյան տնտեսական ընկերությունների նկատմամբ հսկողության հաստատմանը: Օտարերկրյա ներդրողները կամ անձանց խմբերը պարտավոր են լիազոր մարմնին տեղեկություններ ներկայացնել երկրի պաշտպանության ու պետության անվտանգության համար ռազմավարական նշանակություն ունեցող</p> | <p>«Երկրի պաշտպանության եւ պետության անվտանգության ապահովման համար ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսական ընկերություններում օտարերկրյա ներդրումների իրականացման կարգի մասին» 2008 թվականի ապրիլի 29-ի 57-Փ3 դաշնային օրենք</p> | Սահմանված չէ |

| | | | | |
|----|---|---|---|--------------|
| | | գործունեության տեսակներից թեկուզ մեկն իրականացնող ռուսաստանյան տնտեսական ընկերությունների կանոնադրական կապիտալներում հինգ եւ ավելի տոկոս բաժնետոմսեր (բաժնեմասեր) ձեռք բերելու մասին: | | |
| 6. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ ըստ 4-րդ հոդվածի | Ցանկացած այլ Կողմի անձանց կողմից իրավաբանական անձանց հիմնադրումը, մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների բացումը, Ռուսաստանի Դաշնությունում փակ վարչատարածքային կազմավորման տարածքում որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելը, փակ վարչատարածքային կազմավորման տարածքում գրանցված իրավաբանական անձանց կապիտալում մասնակցային բաժնեմասի՝ ցանկացած այլ Կողմի կողմից ձեռքբերումը, ինչպես նաեւ փակ վարչատարածքային կազմավորման գրանցված (այդ թվում՝ օտարերկրյա կապիտալով) իրավաբանական անձանց, մասնաճյուղերի եւ ներկայացուցչությունների գործունեությունը կարող է սահմանափակվել կամ արգելվել Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերին համապատասխան: | «Փակ վարչատարածքային կազմավորման մասին» 1992 թվականի հուլիսի 14-ի թիվ 3297-1 դաշնային օրենք | Սահմանված չէ |
| 7. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Բնիկ փոքրաթիվ ժողովուրդների եւ փոքր էթնիկ խմբերի ավանդական բնակության եւ տնտեսական գործունեության իրականացման հողերի, ինչպես նաեւ սահմանամերձ տարածքներում եւ Ռուսաստանի Դաշնության՝ հատուկ սահմանված տարածքներում գտնվող հողատարածքների հետ կապված գործարքները կարող են սահմանափակվել կամ արգելվել Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերի համաձայն: | Ռուսաստանի Դաշնության 2001 թվականի հոկտեմբերի 25-ի 136-Փ3 Հոդվածի օրենսգիրք, Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի մասին ֆեդերալ օրենսդրություն (մասնավորապես՝ «Ռուսաստանի Դաշնության պետական սահմանի մասին» 1993 թվականի ապրիլի 1-ի թիվ 4730-1 | Սահմանված չէ |

| | | | | |
|----|---|--|--|--------------|
| | | | դաշնային օրենք) | |
| 8. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Ռուսաստանյան իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում օտարերկրյա անձանց բաժնեմասը (կամ դրանց հանրագումարային բաժնեմասը) կազմում է ավելի քան 50 տոկոս, կարող են գյուղատնտեսական նշանակության հողատարածքները տիրապետել բացառապես վարձակալության իրավունքով: Նման վարձակալության ժամկետը չի կարող գերազանցել 49 տարին: | Ռուսաստանի Դաշնության 2001 թվականի հոկտեմբերի 25-ի 136-Փ3 Հոդվածի օրենսգիրք, «Գյուղատնտեսական նշանակության հողերի շրջանառության մասին» 2002 թվականի հուլիսի 24-ի դաշնային օրենք թիվ 101-Փ3 | Սահմանված չէ |
| 9. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Սահմանափակումներ են կիրառվում գազամատակարարման տարածաշրջանային համակարգերի ռուսաստանյան սեփականատերերի եւ գազաբաշխման համակարգերի սեփականատերերի սովորական բաժնետոմսերի ընդհանուր քանակի 20 տոկոսից ավելին ցանկացած այլ Կողմի անձանց կողմից ձեռք բերվելու նկատմամբ: Ռուսաստանի Դաշնության սեփականության տակ գտնվող գազամատակարարման միասնական համակարգի սեփականատեր հանդիսացող կազմակերպության սովորական բաժնետոմսերի գումարային բաժնեմասը պետք է կազմի ոչ պակաս քան 50 տոկոս՝ գումարած մեկ բաժնետոմս: Ռուսաստանի Դաշնության կառավարության կողմից որոշվող՝ դաշնային նշանակության ընդերքի տեղամասերը առանց մրցույթների եւ աճուրդների անցկացման կարող են օգտագործման համար տրամադրվել գազամատակարարման միասնական համակարգի սեփականատեր հանդիսացող կազմակերպությանը՝ գազի հետախուզման եւ արդյունահանման համար կամ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության, գազի հետախուզման եւ | «Ռուսաստանի Դաշնությունում գազամատակարարման մասին» 1999 թվականի մարտի 31-ի թիվ 69-Փ3 դաշնային օրենք | Սահմանված չէ |

| | | | | |
|-----|---|---|--|--------------|
| | | արդյունահանման համար , որոնք իրականացվում են համատեղ լիցենզիայով: | | |
| 10. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Ռուսաստանի Դաշնությանը, Ռուսաստանի Դաշնության սուբյեկտներին եւ առանց օտարերկրյա անձանց մասնակցության (ուղղակի կամ անուղղակի) ստեղծված կազմակերպություններին պետք է պատկանի Ռուսաստանի Դաշնության տարածքում ավմաստի արդյունահանման գործունեություն իրականացնող կազմակերպությունների կառավարման մարմինների որոշումների ընդունման ժամանակ հաշվի առնվող ձայների մեծամասնությունը: | «Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի մասին» 1998 թվականի մարտի 26-ի թիվ 41-Փ3 դաշնային օրենք | Սահմանված չէ |
| 11. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Թանկարժեք մետաղների գտարկում (աֆինաժ) իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների ցանկը, ինչպես նաեւ դրանց գործունեության կարգը սահմանվում է Ռուսաստանի Դաշնության նորմատիվ իրավական ակտերով: | «Թանկարժեք մետաղների գտարկում (աֆինաժ) իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների ցանկը եւ թանկարժեք մետաղների գտարկում (աֆինաժ) իրականացնող կազմակերպությունների գործունեության կարգը հաստատելու մասին» Ռուսաստանի Դաշնության կառավարության 1998 թվականի օգոստոսի 17-ի թիվ 972 որոշում | Սահմանված չէ |
| 12. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Փաստաբանները կարող են ծառայություններ մատուցել միայն փաստաբանական բյուրոյի եւ կաբինետների, փաստաբանների կոլեգիայի եւ իրավաբանական խորհրդատվության միջոցով: Օտարերկրյա պետությունների փաստաբաններին չի թույլատրվում | «Ռուսաստանի Դաշնությունում փաստաբանական գործունեության եւ փաստաբանության մասին» 2002 թվականի մայիսի 31-ի թիվ 63-Փ3 | Սահմանված չէ |

| | | | | |
|-----|--|--|---|---------------------|
| | | <p>Ռուսաստանի Դաշնության տարածքում իրավաբանական օգնություն տրամադրել Ռուսաստանի Դաշնության պետական գաղտնիքի հետ կապված հարցերով:</p> <p>Օտարերկրյա քաղաքացիները իրավունք ունեն Ռուսաստանի Դաշնությունում ստանալ փաստաբանի կարգավիճակ, եթե նրանք միաժամանակ այլ պետությունների փաստաբաններ չեն:</p> | <p>դաշնային օրենք</p> | |
| 13. | <p>Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ)</p> | <p>Ռուսաստանի Դաշնությունում մասնավոր խուզարկուական եւ պահնորդական գործունեություն կարող են իրականացնել բացառապես Ռուսաստանի Դաշնության իրավաբանական եւ ֆիզիկական անձինք:</p> | <p>«Ռուսաստանի Դաշնությունում մասնավոր խուզարկուական եւ պահնորդական գործունեության մասին»</p> <p>Ռուսաստանի Դաշնության 1992 թվականի մարտի 11-ի թիվ 2487-1 օրենք</p> | <p>Սահմանված չէ</p> |
| 14. | <p>Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ ըստ 4-րդ հոդվածի</p> | <p>Սահմանափակումներ են կիրառվում Ռուսաստանի Դաշնության տարածքում միջուկային էներգետիկայի եւ ռադիոակտիվ թափոնների կառավարման ոլորտում գործունեության եւ գործառնությունների իրականացման նպատակով ցանկացած Կողմի անձի հիմնադրման նկատմամբ:</p> | <p>«Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում գործունեություն իրականացնող կազմակերպությունների գույքի եւ բաժնետոմսերի կառավարման եւ տնօրինման առանձնահատկությունների եւ Ռուսաստանի Դաշնության առանձին օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարելու մասին»</p> <p>2007 թվականի փետրվարի 5-ի թիվ 13-Փ3 դաշնային օրենք, «Ատոմային էներգիայի օգտագործման մասին» 1995 թվականի նոյեմբերի</p> | <p>Սահմանված չէ</p> |

| | | | | |
|-----|--|---|---|--------------|
| | | | 21-ի թիվ 170-Փ3 Դաշնային օրենք, «Ռուսաստանի Դաշնության մայրցամաքային շելֆի մասին» 1995 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 187-Փ դաշնային օրենք | |
| 15. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Ռուսաստանի Դաշնության տարածքում կադաստրային գործունեությունը կարող է իրականացվել բացառապես Ռուսաստանի Դաշնության անձանց կողմից: | «Անշարժ գույքի պետական կադաստրի մասին» 2007 թվականի հուլիսի 24-ի թիվ 221- Փ3 դաշնային օրենք | Սահմանված չէ |
| 16. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) եւ ըստ 4- րդ հոդվածի | Ապահովագրական գործակալներ, ապահովագրական միջնորդներ կարող են լինել բացառապես ռուսաստանյան անձինք: | «Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործի կազմակերպման մասին» 1992 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 4015-1 դաշնային օրենք | Սահմանված չէ |
| 17. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Օտարերկրյա ներդրումներով վարկային կազմակերպությունների ստեղծման համար պահանջվում է Ռուսաստանի Բանկի նախնական թույլտվությունը: Ռուսաստանի Բանկը դադարեցնում է օտարերկրյա ներդրումներով բանկային գործառնությունների իրականացման համար լիցենզիայի տրամադրումը Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված քվոտաներին հասնելու դեպքում: Ռուսաստանի Բանկն իրավունք ունի ձեռնարկել ցանկացած միջոցներ տվյալ սահմանափակման պահպանման համար: Թույլտվության տրման հարցն ուսումնասիրելիս հաշվի է առնվում Ռուսաստանի Դաշնության բանկային համակարգում մասնակցության քվոտայի օգտագործման մակարդակը, ինչպես նաեւ ոչ ռեզիդենտ հանդիսացող | «Բանկերի եւ բանկային գործունեության մասին» 1990 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 395-1 ՌՍՖՍՀ օրենք, «Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկի (Ռուսաստանի Բանկ) մասին» 2002 թվականի հուլիսի 10-ի թիվ 86-Փ3 դաշնային օրենք, «Օտարերկրյա ներդրումներով վարկային կազմակերպությունն երի գրանցման առանձնահատկությո ւնների մասին» Ռուսաստանի | Սահմանված չէ |

| | | | | |
|-----|---|--|---|--------------|
| | | հիմնադիրների ֆինանսական դիրքը եւ գործարար համբավը: | Բանկի 1997 թվականի ապրիլի 23-ի թիվ 437 կանոնակարգը | |
| 18. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | Չհակասելով ՄՏՏ շրջանակներում կնքված այլ համաձայնագրերին, գազի արտահանման բացառիկ իրավունքը տրամադրվում է գազամատակարարման միասնական համակարգի սեփականատերեր հանդիսացող կազմակերպությանը կամ դրա դուստր ընկերությանը, որի կանոնադրական կապիտալում գազամատակարարման միասնական համակարգի սեփականատեր հանդիսացող կազմակերպության մասնակցության բաժնեմասը կազմում է հարյուր տոկոս: | «Գազի արտահանման մասին» 2006 թվականի հուլիսի 18-ի թիվ 117-Փ3 դաշնային օրենք | Սահմանված չէ |
| 19. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման առնչությամբ) եւ ըստ 4-րդ հոդվածի | Ռուսաստանի Դաշնության ծովային նավահանգիստների միջեւ հաղորդակցման ուղիներով փոխադրումները եւ քարշակումը (կաբոտաժ) իրականացվում է Ռուսաստանի Դաշնության պետական դրոշի ներքո նավարկող նավերի կողմից, բացառությամբ Նավերի ռուսաստանյան միջազգային ռեեստրում գրանցված եւ Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձանց պատկանող նավերի, որոնց կապիտալում օտարերկրյա բաժնեմասը չի գերազանցում քառասունինը տոկոսը: Օտարերկրյա քաղաքացիները չեն կարող զբաղեցնել Ռուսաստանի Դաշնության պետական դրոշի ներքո նավարկող նավի նավապետի, նավապետի ավագ օգնականի, ավագ մեխանիկի եւ նավի ռադիոմասնագետի պաշտոնը: Ծովային նավատարներ կարող են լինել բացառապես Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները: | Ռուսաստանի Դաշնության 1999 թվականի ապրիլի 30-ի N 81-Փ3 Առետրային ծովագնացության օրենսգիրք | Սահմանված չէ |
| 20. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության | Սահմանափակումներ կարող են կիրառվել Ռուսաստանի Դաշնության մայրցամաքային | «Ռուսաստանի Դաշնության մայրցամաքային | Սահմանված չէ |

| | | | | |
|-----|---|--|--|--------------|
| | եւ հիմնադրման առնչությամբ) | շլեյֆի սահմաններում գործունեության առնչությամբ: | շեյֆի մասին» 1995 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 187-Փ3 դաշնային օրենք | |
| 21. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) | Կոնկրետ տարածքում կամ ջրատարածքում (ակվատորիա) օգտագործման համար կենդանական աշխարհի տրամադրման նախապատվությունը տրվում է Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներին: | «Կենդանական աշխարհի մասին» 1995 թվականի ապրիլի 24-ի թիվ 52-Փ3 դաշնային օրենք | Սահմանված չէ |
| 22. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) | 1. Օտարերկրյա քաղաքացին չի կարող լինել զանգվածային լրատվության միջոցի հիմնադիր (համահիմնադիր): 2. Ցանկացած այլ Կողմի իրավաբանական անձը, ինչպես նաեւ օտարերկրյա մասնակցությամբ ռուսաստանյան իրավաբանական անձը, որի կանոնադրական (բաժնետիրական) կապիտալում օտարերկրյա մասնակցության բաժնեմասը (ավանդը) կազմում է 50 եւ ավելի տոկոս, իրավունք չունի հանդես գալ որպես հեռուստահաղորդումների, տեսահաղորդումների հիմնադիր: 3. Օտարերկրյա քաղաքացին, օտարերկրյա իրավաբանական անձը, ինչպես նաեւ օտարերկրյա մասնակցությամբ ռուսաստանյան իրավաբանական անձը, որի կանոնադրական (բաժնետիրական) կապիտալում օտարերկրյա մասնակցության բաժնեմասը (ավանդը) կազմում է 50 տոկոս եւ ավելի, իրավունք չունի հիմնադրել հեռուստահեռարձակում իրականացնող կազմակերպություններ (իրավաբանական անձինք), որոնց հաղորդումների հաստատուն ընդունման գոտին ընդգրկում է Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների կեսը եւ ավելին, կամ տարածքը, որտեղ բնակվում են Ռուսաստանի Դաշնության բնակչության թվի կեսը եւ ավելին: 4. Հեռուստահաղորդումների, տեսահաղորդումների | «Զանգվածային լրատվության միջոցների մասին» 1991 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ 2124-1 դաշնային օրենք | Սահմանված չէ |

| | | | | |
|-----|--|---|---|---------------------|
| | | <p>հիմնադիրներին, այդ թվում դրա գրանցումից հետո, հեռուստահեռարձակում իրականացնող կազմակերպությանը (իրավաբանական անձին), որոնց հաղորդումների հաստատուն ընդունման գոտին ընդգրկում է Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների կեսը եւ կեսից ավելին, կամ տարածքը, որտեղ բնակվում են Ռուսաստանի Դաշնության բնակչության թվի կեսը եւ ավելին, չի թույլատրվում բաժնետոմսերի (բաժնեմասերի) օտարումը, ինչը հանգեցնում է իրենց կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալում օտարերկրյա մասնակցության 50 տոկոս եւ ավելին կազմող բաժնեմասի (ավանդի) առաջացմանը:</p> | | |
| 23. | <p>Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ), ըստ 5-րդ հոդվածի</p> | <p>Արտադրանքի բաժանման վերաբերյալ համաձայնագրերի կնքման առնչությամբ, որոնք կնքվել են մինչ Համաձայնագրի ուժի մեջ մտնելը՝</p> <p>1. Արտադրանքի բաժանման վերաբերյալ համաձայնագրի կնքման համար աճուրդի պայմաններով պետք է նախատեսվի համաձայնագրերի իրականացման գործում ռուսաստանյան իրավաբանական անձանց մասնակցությունը՝ Ռուսաստանի Դաշնության կառավարությամբ սահմանված բաժնեմասերով:</p> <p>2. Համաձայնագրով նախատեսվում են ներդրողի պարտավորությունները հետեւյալի առնչությամբ՝</p> <ul style="list-style-type: none"> - ներդրողների հետ պայմանագրերի հիման վրա՝ ըստ համաձայնության, աշխատանքներում որպես կապալառուներ, մատակարարներ, փոխադրողներ կամ որպես այլ անձինք մասնակցելու նախապատվության իրավունքի տրամադրումը ռուսաստանյան իրավաբանական անձանց. - բոլոր ներգրավված | <p>«Արտադրանքի բաժանման վերաբերյալ համաձայնություններ ի մասին» 1995 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 225-Փ3 դաշնային օրենք</p> | <p>Սահմանված չէ</p> |

աշխատողների կազմի ոչ պակաս քան 80 տոկոսը կազմող՝ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող աշխատողների ներգրավումը, օտարերկրյա աշխատողների եւ մասնագետների ներգրավումը միայն համաձայնագրով աշխատանքների նախնական փուլերում կամ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող՝ համապատասխան որակավորումներ ունեցող աշխատողների եւ մասնագետների բացակայության դեպքում.

- օգտակար հանածոների երկրաբանական ուսումնասիրության, արդյունահանման, փոխադրման եւ վերամշակման համար անհրաժեշտ ռուսաստանյան ծագման սարքավորումների ձեռքբերումը՝ ըստ համաձայնագրի աշխատանքների կատարման համար յուրաքանչյուր օրացուցային տարում ձեռք բերվող (այդ թվում՝ վարձակալման, լիզինգի եւ այլ հիմունքներով ձեռք բերվող) սարքավորումների, տեխնիկական միջոցների եւ նյութերի ընդհանուր արժեքի ոչ պակաս քան 70 տոկոսի ծավալով, որոնց ձեռքբերման եւ օգտագործման համար ծախսերը հատուցվում են ներդրողին փոխհատուցվող արտադրանքով: Ընդ որում, սարքավորումները, տեխնիկական միջոցները եւ նյութերը համարվում են ռուսաստանյան ծագման՝ պայմանով, որ դրանք պատրաստված լինեն ռուսաստանյան իրավաբանական անձանց եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների կողմից Ռուսաստանի Դաշնության տարածքում հանգույցներից, դետալներից, կառուցվածքներից եւ կոմպլեկտավորող տարրերից՝ 50 տոկոսից ոչ պակաս արժեքային արտահայտությամբ արտադրված ռուսաստանյան իրավաբանական անձանց եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների կողմից Ռուսաստանի Դաշնության

| | | | | |
|-----|--|---|---|--------------|
| | | <p>տարածքում: Կողմերը պետք է նախատեսեն համաձայնագրում պայման այն մասին, որ համաձայնագրով աշխատանքների կատարման համար ներդրողների կողմից օգտագործվող եւ (կամ) ձեռք բերվող՝ օգտակար հանածոների արդյունահանման, դրանց փոխադրման եւ վերամշակման (եթե դա նախատեսվում է համաձայնագրով) համար տեխնոլոգիական սարքավորման՝ արժեքային արտահայտությամբ ոչ պակաս քան 70 տոկոսը պետք է լինի ռուսաստանյան ծագման: Տվյալ դրույթը չի տարածվում մայրուղային խողովակաշարային տրանսպորտի օբյեկտների օգտագործման վրա, որոնց կառուցումը եւ ձեռքբերումը նախատեսված չեն համաձայնագրով:</p> | | |
| 24. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | <p>Աուդիտորական ծառայությունների առնչությամբ. Առետրային կազմակերպությունը կարող է ստեղծվել ցանկացած կազմակերպատիրավական ձեռով, բացառությամբ բաց բաժնետիրական ընկերության, պետական կամ մունիցիպալ միացյալ ձեռնարկության:</p> | <p>«Աուդիտորական գործունեության մասին» 2008 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 307-Փ3 դաշնային օրենք</p> | Սահմանված չէ |
| 25. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի եւ 4-րդ հոդվածի 1-ին կետի | <p>Ռուսաստանի Դաշնությունում ֆինանսական ծառայությունների ոլորտում գործունեության իրականացման համար լիցենզիան տրվում է Ռուսաստանի Դաշնության օրենսդրությամբ սահմանված կազմակերպատիրավական ձեռով ստեղծված Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձանց: <*></p> | <p>«Բանկերի եւ բանկային գործունեության մասին» 1990 թվականի դեկտեմբերի 1-ի թիվ 395-1 դաշնային օրենք, «Արժեթղթերի շուկայի մասին» 1996 թվականի ապրիլի 22-ի թիվ 39-Փ3 դաշնային օրենք, «Ռուսաստանի Դաշնությունում ապահովագրական գործի կազմակերպման մասին» 1992 թվականի նոյեմբերի</p> | Սահմանված չէ |

| | | | | |
|-----|---|--|---|--------------|
| | | | 27-ի թիվ 4015-1 դաշնային օրենք | |
| 26. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 3-րդ կետի | Օտարերկրյա ներդրումներով վարկային կազմակերպությունների առնչությամբ. Եթե ռուսաստանյան վարկային կազմակերպության միանձնյա գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ է, ապա նման վարկային կազմակերպության գործադիր կոլեգիալ մարմինը ոչ պակաս քան հիսուն տոկոսով պետք է ձեւավորված լինի Ռուսաստանի Դաշնության քաղաքացիներից: Ռուսաստանի Դաշնության քաղաքացի հանդիսացող աշխատողների թիվը պետք է կազմի օտարերկրյա ներդրումներով ռուսաստանյան վարկային կազմակերպությունների աշխատողների ընդհանուր թվի ոչ պակաս քան յոթանասունհինգ տոկոսը: | «Օտարերկրյա ներդրումներով վարկային կազմակերպությունների գրանցման առանձնահատկությունների եւ գրանցված վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի՝ ոչ ռեզիդենտների միջոցների հաշվին ավելացման համար Ռուսաստանի Բանկի նախնական թույլտվության ստացման կարգը» գործողության մեջ դնելու մասին» հաստատելու մասին» Ռուսաստանի կենտրոնական բանկի 1997 թվականի ապրիլի 23-ի թիվ 02-195 հրաման | Սահմանված չէ |
| 27. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 3-րդ կետի | Իրավաբանական անձ հանդիսացող՝ ռուսաստանյան ապահովագրական գործի սուբյեկտի ղեկավարները (այդ թվում՝ միանձնյա գործադիր մարմինը) եւ գլխավոր հաշվապահը պետք է մշտապես բնակվեն Ռուսաստանի Դաշնության տարածքում: | | Սահմանված չէ |
| 28. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ), ըստ 4-րդ հոդվածի | 1. Ավիացիոն տեխնիկայի նախագծման, արտադրության, փորձարկման, նորոգման եւ (կամ) օգտագործման հետ կապված գործունեություն իրականացնող ավիացիոն կազմակերպությունում օտարերկրյա կապիտալի մասնակցությունը թույլատրվում է՝ պայմանով, որ օտարերկրյա կապիտալի մասնակցության բաժնեմասը կազմի ավիացիոն | Ռուսաստանի Դաշնության 1997 թվականի մարտի 19-ի թիվ 60-Փ3 Օդային օրենսգիրք, «Ավիացիայի զարգացման պետական կարգավորման մասին» 1998 թվականի հունվարի | Սահմանված չէ |

| | | | | |
|-----|---|---|--|--------------|
| | | <p>կազմակերպության կանոնադրական կապիտալի 25 տոկոսից պակաս մասը, կամ Ռուսաստանի Դաշնության Նախագահի որոշմամբ: Նման կազմակերպության ղեկավարներ եւ դրա կառավարման մարմնի կազմի մեջ մտնող անձինք կարող են լինեն միայն Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները, եթե այլ բան չի նախատեսվում Ռուսաստանի Դաշնության Նախագահի որոշմամբ:</p> <p>2. Օտարերկրյա կապիտալի մասնակցությամբ ավիացիոն ձեռնարկության ստեղծումը Ռուսաստանի Դաշնության տարածքում թույլատրվում է պայմաններով, եթե օտարերկրյա կապիտալի մասնակցությունը չի գերազանցում ավիացիոն ձեռնարկության կանոնադրական կապիտալի 49 տոկոսը, դրա ղեկավարը Ռուսաստանի Դաշնության քաղաքացի է եւ ավիացիոն ձեռնարկության ղեկավար մարմնում օտարերկրյա քաղաքացիների թիվը չի գերազանցում ղեկավար մարմնի կազմի մեկ երրորդը:</p> <p>Օտարերկրյա ավիացիոն ձեռնարկությունները կարող են իրենց ներկայացուցչությունները բացել Ռուսաստանի Դաշնության տարածքում Ռուսաստանի Դաշնության օրենսդրության եւ (կամ) Ռուսաստանի Դաշնության միջազգային պայմանագրերի համաձայն:</p> | <p>8-ի թիվ 10-Փ3 դաշնային օրենք, «Ավիացիոն տեխնիկայի ոլորտում գործունեության լիցենզավորման մասին դրույթների հաստատման մասին»</p> <p>Ռուսաստանի Դաշնության կառավարության 2002 թվականի մայիսի 27-ի թիվ 346 որոշում</p> | |
| 29. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության առնչությամբ) | Բնակարանային-կոմունալ ծառայությունների, ջրօգտագործման եւ ջրամատակարարման ոլորտում գործունեության իրականացման հետ կապված պայմանագրերը կնքվում են իրավաբանական անձի հետ: Պայմանագրերի թիվը կարող է սահմանափակվել՝ ելնելով տեղական պահանջներից: | Ռուսաստանի Դաշնության 2006 թվականի հուլիսի 3-ի թիվ 74-Փ3 Ջրային օրենսգիրք, «Քաղաքացիներին կոմունալ ծառայությունների տրամադրման կարգի մասին» <p>Ռուսաստանի Դաշնության կառավարության 2006 թվականի</p> | Սահմանված չէ |

| | | | | |
|-----|--|--|---|--------------|
| | | | մայիսի 23-ի թիվ 307 որոշում, Ռուսաստանի Դաշնության բնակարանային օրենսգիրք | |
| 30. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Բացառիկ կոնցեսիոներ նշանակելու իրավունքը պահպանվում է: Կոնցեդենտի (շնորհատուի) առանձին իրավունքները եւ պարտավորությունները կարող են իրականացվել կոնցեդենտի (շնորհատուի) կողմից լիազորվածների կողմից: | «Կոնցեսիոն համաձայնագրերի մասին» 2005 թվականի հուլիսի 21-ի N 115-Փ3 դաշնային օրենք | Սահմանված չէ |
| 31. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Լիցենզավորման ենթակա գործունեությունը կարող է իրականացվել բացառապես Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձանց կամ Ռուսաստանի Դաշնությունում սահմանված կարգով գրանցված անհատ ձեռնարկատերերի կողմից: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակները սահմանվում են օրենսդրության համաձայն: | «Գործունեության առանձին տեսակների լիցենզավորման մասին» 2001 թվականի օգոստոսի 8-ի թիվ 128-Փ3 դաշնային օրենք եւ նշված Դաշնային օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետում թվարկված գործունեության տեսակները կարգավորող օրենսդրություն | Սահմանված չէ |
| 32. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի արտադրության համար օգտագործվող բույսերի մշակման մասով թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության, թմրամիջոցների եւ հոգեմետ միջոցների վերամշակման, արտադրության, բաշխման եւ ոչնչացման հետ կապված գործունեությունը կարող է իրականացվել բացառապես պետական միացյալ ձեռնարկությունների կողմից: | «Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի մասին» դաշնային օրենքի համաձայն I ցանկում ներառված թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի շրջանառության հետ կապված գործունեության լիցենզավորման կանոնակարգի հաստատման մասին» Ռուսաստանի Դաշնության կառավարության 2008 թվականի ապրիլի 7-ի թիվ 249 | Սահմանված չէ |

| | | | | |
|-----|---|---|---|--------------|
| | | | որոշում | |
| 33. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (հիմնադրման եւ գործունեության առնչությամբ) եւ ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Ռուսաստանի Դաշնության սահմաններից դուրս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների աշխատանքի տեղավորման հետ կապված գործունեությունը իրականացվում է Ռուսաստանի Դաշնության անհատ ձեռնարկատերերի կողմից: | «Ռուսաստանի Դաշնության սահմաններից դուրս Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների աշխատանքի տեղավորման հետ կապված գործունեության լիցենզավորման մասին կանոնակարգի հաստատման մասին» Ռուսաստանի Դաշնության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 797 որոշում | Սահմանված չէ |
| 34. | Սահմանափակում ըստ 3-րդ հոդվածի 1-ին կետի (գործունեության եւ հիմնադրման առնչությամբ) եւ 4-րդ հոդվածի | Տիեզերական գործունեությունը կարող է իրականացվել միայն Ռուսաստանի Դաշնության իրավաբանական անձանց կողմից: | «Տիեզերական գործունեության լիցենզավորման մասին կանոնակարգի հաստատման մասին» Ռուսաստանի Դաշնության կառավարության 2006 թվականի հունիսի 30-ի թիվ 403 որոշում | Սահմանված չէ |
| 35. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի | Կանոնադրական կապիտալում բորսայի յուրաքանչյուր հիմնադրի կամ անդամի բաժնեմասը չի կարող գերազանցել տասը տոկոսը: <*> | «Ապրանքային բորսաների եւ բորսային առետրի մասին» Ռուսաստանի Դաշնության 1992 թվականի փետրվարի 20-ի թիվ 2383-Ն օրենք | Սահմանված չէ |
| 36. | Սահմանափակում ըստ 4-րդ հոդվածի 1-ին կետի | Կրթության ոլորտում գործունեությունն իրականացվում է ոչ առետրային կազմակերպություն հանդիսացող՝ Ռուսաստանի Դաշնության իրավաբանական | «Կրթության մասին» Ռուսաստանի Դաշնության 1992 թվականի հուլիսի 10-ի թիվ 3266-Ն | Սահմանված չէ |

| | | | |
|--|----------------|-------|--|
| | անձանց կողմից: | օրենք | |
|--|----------------|-------|--|

<*> Չնայած սույն Համաձայնագրի V Հավելվածի դրույթներին, տվյալ միջոցի գործողության ժամկետը սահմանված չէ:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 1

Կիրառման ոլորտը

1. Սույն Հավելվածը կիրառվում է ֆինանսական ծառայությունների մատակարարմանը/առետրին վերաբերող՝ Կողմերի միջոցների նկատմամբ:

2. Յուրաքանչյուր Կողմ տրամադրում է ազգային ռեժիմ եւ այլ Կողմերի իրավաբանական անձ հանդիսացող՝ ֆինանսական ծառայություններ տրամադրողներին թույլ է տալիս ինքնուրույն, միջնորդի միջոցով կամ որպես միջնորդ՝ սույն Համաձայնագրի 9-րդ հոդվածում նշված՝ Կողմերի հավելվածներում նախապայմանավորված պայմաններին համապատասխան, տրամադրել ծառայությունների հետեւյալ տեսակները՝

ա) ռիսկերի ապահովագրում, որոնք վերաբերում են՝

i. ծովային փոխադրումներին, առետրային օդային փոխադրումներին, առետրային տիեզերական արձակումներին եւ ֆրախտին (ներառյալ՝ արբանյակների), որոնց նման ապահովագրումն առնչվում է ամբողջությամբ կամ մասամբ. փոխադրվող ապրանքներ, ապրանքը փոխադրող փոխադրամիջոցներ եւ փոխադրման առնչությամբ առաջացող քաղաքացիաիրավական պատասխանատվություն, եւ

ii. միջազգային տարանցման շրջանակներում տեղափոխվող ապրանքներին.

բ) վերաապահովագրում, ինչպես նաեւ օժանդակ ապահովագրական ծառայություններ, ինչպիսիք են՝ խորհրդատվական ծառայությունները, ակտուարային ծառայությունները, ռիսկի գնահատումը եւ պահանջների կարգավորումը.

գ) ֆինանսական տեղեկությունների տրամադրում եւ փոխանցում ու այլ ֆինանսական ծառայություններ մատակարարողների ֆինանսական տվյալների եւ համապատասխան ծրագրային ապահովման մշակում, ինչպես նաեւ

դ) խորհրդատվական եւ այլ օժանդակ ծառայություններ, բացի միջնորդությունից

(ներառյալ տեղեկատվական նյութերի տրամադրումը, բացառությամբ վարկային պատմությունների վերլուծության հետ կապված ծառայությունների, ուղղակի եւ պորտֆելային ներդրումների մասով հետազոտությունների եւ առաջարկությունների, կորպորացիաների ձեռքբերումների, վերակազմակերպման եւ ռազմավարության հարցերով առաջարկությունների) կապված՝

- բնակչությունից ավանդների եւ վճարման ենթակա այլ դրամական միջոցների ընդունման.

- բոլոր տեսակի փոխատվությունների տրամադրման.

- ֆինանսական լիզինգի.

- վճարումների եւ դրամական փոխանցումների հետ կապված բոլոր տեսակի ծառայությունների.

- իր հաշվին եւ հաճախորդների հաշվին՝ արժութային բորսայում, արտաբորսային շուկայում կամ այլ կերպ՝ ֆինանսական շուկայի գործիքներով, արտարժույթով, ածանցյալներով, արժույթների փոխարժեքներին եւ տոկոսադրույքներին վերաբերող գործիքներով, փոխանցելի արժեթղթերով եւ այլ շրջանառու գործիքներով ու ֆինանսական ակտիվներով առետրի.

- արժեթղթերի թողարկման մեջ մասնակցության.

- ֆինանսական շուկայում բրոքերային գործառնությունների.

- ակտիվների կառավարման.

- ֆինանսական ակտիվների, ներառյալ արժեթղթերի, ածանցյալների եւ շրջանառու այլ գործիքների քլիրինգային ծառայությունների.

- ֆինանսական տեղեկությունների տրամադրման եւ փոխանցման հետ:

3. Յուրաքանչյուր Կողմ այդ Կողմի անձանց թույլատրում է ցանկացած այլ Կողմի տարածքում սույն հոդվածի 2-րդ կետի «ա»-ից «դ» ենթակետերում նկարագրված հետեւյալ ֆինանսական ծառայությունները:

Հոդված 2

Սահմանումները

Սույն Հավելվածի նպատակներով կիրառվում են հետեւյալ հասկացությունները՝

1. «Ֆինանսական ծառայությունների տրամադրում/առետուր» սույն Հավելվածում նշանակում է «ծառայությունների առետուր», ինչպես սահմանված է սույն Համաձայնագրի 1-ին հոդվածի «ժ» ենթակետում, սույն Հավելվածի 2-րդ հոդվածի 4-րդ կետում նշված ոլորտներում:

2. «Ֆինանսական ծառայություններ տրամադրող» նշանակում է Կողմի ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը տրամադրում է ֆինանսական ծառայություններ, բացառությամբ պետական հաստատությունների:

3. «Պետական հաստատություն» նշանակում է՝

Պետական հաստատություն՝ պետական իշխանության մարմին կամ Կենտրոնական բանկը (Ազգային բանկ) կամ էլ Կողմ հանդիսացող պետության կազմակերպություն, որը պատկանում կամ վերահսկվում է այդ Կողմ պետության կողմից, որն իրականացնում է բացառապես այդ Կողմի պետական իշխանության մարմնի կամ նման Կողմի Կենտրոնական բանկի (Ազգային բանկի) կողմից պատվիրակված լիազորություններ:

4. «Ֆինանսական ծառայություն» նշանակում է Կողմ պետության ֆինանսական ծառայություն տրամադրողի կողմից առաջարկվող ֆինանսական բնույթի ցանկացած ծառայություն: Ֆինանսական ծառայությունները ներառում են բոլոր ապահովագրական եւ ապահովագրական ծառայությունների շարքին դասվող ծառայությունները, ինչպես նաեւ բանկային ծառայությունները եւ արժեթղթերի շուկայում ծառայությունները, մասնավորապես՝ ներառում են ծառայությունների հետեւյալ տեսակները՝

4.1. Ապահովագրական եւ ապահովագրական ծառայությունների շարքին դասվող ծառայություններ՝

i. Ապահովագրում (համաապահովագրում).

ա) կյանքի ապահովագրություն,

բ) կյանքի ապահովագրությունից բացի այլ ապահովագրություն,

ii. Վերաապահովագրություն.

iii. Ապահովագրական միջնորդություն, ինչպիսիք են՝ բրոքերային եւ գործակալական միջնորդությունը.

iv. Ապահովագրության մասով օժանդակ ծառայություններ, ինչպիսիք են խորհրդատվական, ակտուարային ծառայությունները, ռիսկի գնահատումը եւ պահանջների կարգավորման հետ կապված ծառայությունները:

4.2. Բանկային ծառայություններ՝

i. Բնակչությունից ավանդների եւ վճարման ենթակա այլ դրամական միջոցների ընդունում.

ii. Բոլոր տեսակի փոխատվությունների տրամադրում, այդ թվում՝ սպառողական վարկ, գրավի դիմաց վարկ, ֆակտորինգ եւ առետրային գործառնությունների ֆինանսավորում.

iii. Ֆինանսական լիզինգ.

iv. Վճարման եւ դրամական փոխանցումների մասով ծառայությունների բոլոր տեսակները՝ ներառյալ վարկավորումը, վճարային եւ դեբիտորական քարտերը, ճանապարհային չեկերը եւ բանկային մուրհակները.

v. Արժույթային բորսայում եւ բորսայից դուրս կամ այլ կերպ՝ իր հաշվին եւ հաճախորդների հաշվին առետրուրը՝

ա) արտարժույթով.

բ) ածանցյալներով, այդ թվում նաեւ, սակայն ոչ բացառապես՝ ֆյուչերսներով եւ օպցիոններով.

գ) գործիքներով, որոնք վերաբերում են արժույթային փոխարժեքներին եւ տոկոսադրույքներին, ներառյալ այնպիսիք, ինչպիսիք են՝ «սվոփ» գործարքները եւ ֆորվարդային գործարքները:

4.3. Ծառայություններ արժեթղթերի շուկայում՝

i. Արժույթային բորսայում եւ բորսայից դուրս կամ այլ կերպ՝ իր հաշվին եւ հաճախորդների հաշվին առետուր՝

ա) դրամական շուկայի գործիքներով (ներառյալ չեկերով, փոխանցամուրհակներով, դեպոզիտային (ավանդային) սերտիֆիկատներով).

բ) փոխանցելի արժեթղթերով.

գ) այլ շրջանառու գործիքներով եւ ֆինանսական ակտիվներով.

ii. Բոլոր տեսակի արժեթղթերի էմիսիաներում մասնակցություն, ներառյալ երաշխավորումը եւ տեղաբաշխումը որպէս գործակալ (պետական կամ մասնավոր), եւ նման էմիսիաներին վերաբերող ծառայությունների մատուցում.

iii. Բրոքերային գործառնություններ ֆինանսական շուկայում.

iv. Ակտիվների, ինչպէս օրինակ՝ կանխիկ գումարի կամ արժեթղթերի կառավարում, կոլլեկտիվ ներդրումների կառավարման բոլոր տեսակները, կենսաթոշակային ֆոնդի կառավարում, հոգաբարձություն, պահպանման հետ կապված ծառայություններ եւ տրաստային ծառայություններ.

v. Ֆինանսական ակտիվների՝ ներառյալ արժեթղթերի, ածանցյալների եւ այլ գործիքների, հետ կապված քլիրինգային ծառայությունները.

vi. Ֆինանսական տեղեկությունների տրամադրում եւ փոխանցում ու այլ ֆինանսական ծառայություններ մատակարարողների ֆինանսական տվյալների եւ համապատասխան ծրագրային ապահովման մշակում.

vii. Սույն կետի «i»-ից «v» ենթակետերում թվարկված գործունեության բոլոր տեսակներում խորհրդատվական, միջնորդային եւ այլ օժանդակ ֆինանսական ծառայությունները, ներառյալ վարկային հարցերով տեղեկատվական եւ վերլուծական նյութերը, ուղղակի եւ պորտֆելային ներդրումներին առնչվող ուսումնասիրությունները եւ առաջարկությունները, կորպորացիաների ձեռքբերման, վերակազմակերպման եւ ռազմավարության վերաբերյալ առաջարկությունները:

Հոդված 3

Ներքին կարգավորումը

1. Կողմ հանդիսացող պետության տարածքում ֆինանսական ծառայությունների շուկաներում գործունեության իրականացման համար լիցենզիաների, ինչպէս նաեւ հատուկ թույլտվությունների տրման կարգն իրականացվում է այն Կողմի ազգային օրենսդրությանը

համապատասխան, որի տարածքում նախատեսվում է գործունեության իրականացումը:

2. Սույն Համաձայնագրում ոչինչ չի խոչընդոտում Կողմին ձեռնարկել պրուդենցիալ միջոցներ՝ ներառյալ ներդրողների, ներդրում կատարողների, ապահովագրիչների եւ այն անձանց շահերի պաշտպանությունը, որոնց նկատմամբ ծառայություններ տրամադրողն ունի ֆիդուցիար պարտականություն կամ ֆինանսական համակարգի ամբողջականության եւ կայունության ապահովման համար միջոցներ: Եթե նման միջոցները չեն համապատասխանում Համաձայնագրի դրույթներին, ապա դրանք չպետք է օգտագործվեն որպես Համաձայնագրի համաձայն նման Կողմի ստանձնած պարտավորությունների կատարումից խուսափելու միջոց:

3. Սույն Հավելվածում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես Կողմին ներկայացվող պահանջ՝ հրապարակելու այն տեղեկությունները, որոնք վերաբերում են առանձին հաճախորդների հաշիվներին, կամ պետական հաստատությունների տրամադրության տակ գտնվող գաղտնի կամ սեփականություն համարվող այլ տեղեկություններին:

Հոդված 4

Կողմերի օրենսդրությունների ներդաշնակեցումը

Կողմերն իրականացնում են ազգային օրենսդրությունների ներդաշնակեցում միջազգային սկզբունքների եւ ստանդարտների կամ լավագույն միջազգային փորձի հիման վրա, որոնք չեն զիջում Կողմ հանդիսացող պետություններում արդեն կիրառվող լավագույն ստանդարտներին եւ փորձին՝ ծառայությունների հետեւյալ ոլորտներում իրենց գործունեությունն իրականացնող Կողմերի անձանց ներկայացվող պահանջների ներդաշնակեցված մակարդակ հաստատելու նպատակով՝

- i. բանկային ծառայություններ,
- ii. ապահովագրական ծառայություններ,
- iii. ծառայություններ արժեթղթերի շուկայում:

Հոդված 5

Ներդաշնակեցման իրականացման կարգը

1. Համապատասխան կանոնների ներդաշնակեցումն իրականացվում է հետևյալ փուլերին համապատասխան՝

1.1. Մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը Կողմերը կկնքեն «Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների ֆինանսական շուկաներում գործունեության իրականացմանը ներկայացվող պահանջների մասին» համաձայնագիր: Տվյալ համաձայնագրով նախատեսվելու են Կողմերի ազգային օրենսդրությունների ներդաշնակեցման ուղղությունները եւ կարգը, մասնավորապես՝ սույն Հավելվածի 4-րդ հոդվածում նշված ծառայությունների ոլորտներում գործունեության տեսակների իրականացման համար լիցենզիաների տրման պահանջների եւ պայմանների վերաբերյալ:

1.2. Մինչև 2015 թվականը Կողմերը կքննարկեն Կողմ հանդիսացող պետությունների ֆինանսական շուկայի կարգավորման հարցերով վերազգային մարմնի ստեղծման եւ գործունեության իրականացման հնարավորությունը:

1.3. Մինչև 2020 թվականի հունվարի 1-ը Կողմերը կավարտեն սույն Հավելվածի 4-րդ հոդվածում նշված ծառայությունների ոլորտներում ազգային օրենսդրությունների ներդաշնակեցման գործընթացը:

1.4. Գործելով սույն Համաձայնագրին համապատասխան՝ Կողմերը ձգտում են ցանկացած այլ Կողմի տարածքում տրված՝ սույն Հավելվածի 4-րդ հոդվածում նշված այն ծառայությունների ոլորտներում գործունեության տեսակների իրականացման համար լիցենզիաների փոխադարձ ճանաչմանը:

2. Մինչև 2020 թվականի հունվարի 1-ը Կողմերը պետք է ապահովեն հետևյալ պարամետրերը՝

2.1. Բանկային ոլորտում՝

Ազգային օրենսդրության շրջանակներում Կողմերը ստեղծում են վարկային կազմակերպությունների կարգավորման եւ վերահսկման հետ կապված ներդաշնակեցված պահանջներ՝ իրենց գործողություններում առաջնորդվելով Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքներով

եւ լավագույն միջազգային փորձով, այդ թվում՝ կապված հետեւյալի հետ.

i. «վարկային կազմակերպություն» հասկացությունը եւ դրա իրավաբանական կարգավիճակը.

ii. վարկային կազմակերպությունների, բանկային խմբերի եւ դրանց փոխկապակցված անձանց, բանկային հոլդինգների կողմից տեղեկությունների հրապարակման կարգը եւ պայմանները.

iii. գործունեության բոլոր տեսակների, այդ թվում նաեւ բանկային ոլորտի համար Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան սահմանված հաշվապահական հաշվառման եւ աուդիտորական ստուգումների իրականացման կանոնները եւ աուդիտի միջազգային ստանդարտների համաձայն ֆինանսական (հաշվապահական) հաշվետվողականության աուդիտի անցկացմանը ներկայացվող պահանջները.

iv. վարկային կազմակերպության ստեղծման կարգը եւ պայմանները, մասնավորապես՝

ա) հիմնադիր փաստաթղթերին ներկայացվող պահանջները.

բ) իրավաբանական անձի/մասնաճյուղի պետական գրանցման եւ վարկային կազմակերպության պետական գրանցման կարգը.

գ) վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափի որոշման, դրա ձեւավորման կարգը եւ վճարման կատարման եղանակները.

դ) վարկային կազմակերպության ղեկավար աշխատողների մասնագիտական որակավորմանը եւ գործարար համբավին ներկայացվող պահանջները.

ե) բանկային գործառնությունների իրականացման համար լիցենզիայի տրման կարգի եւ պայմանների, այդ թվում՝ նաեւ բանկային գործառնությունների իրականացման համար լիցենզիաների ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվող պահանջները.

v. վարկային կազմակերպության ազգային գրանցման մերժման եւ բանկային գործառնությունների իրականացման համար դրան լիցենզիա տալու մերժման հիմքերը.

vi. վարկային կազմակերպության լուծարման կամ վերակազմակերպման կարգը, ընթացակարգերը եւ պայմանները (այդ թվում՝ հարկադիր լուծարման).

vii. բանկային գործառնությունների իրականացման համար վարկային կազմակերպության լիցենզիայի չեղարկման հիմքերը.

viii. միաձուլման, միավորման եւ վերակազմավորման ձեռով վարկային կազմակերպությունների վերակազմակերպման կարգը եւ առանձնահատկությունները.

ix. վարկային կազմակերպությունների ֆինանսական հուսալիության ապահովումը, այդ թվում՝ վարկային կազմակերպությունների համար թույլատրված բանկային գործառնություններից բացի գործունեության այլ տեսակների, պրուդենցիալ նորմատիվների, պարտադիր պահուստների եւ հատուկ հատկացումների սահմանումը.

x. Կողմերից յուրաքանչյուրի իրավասու մարմինների կողմից վարկային կազմակերպությունների, բանկային հոլդինգների եւ բանկային խմբերի գործունեության նկատմամբ վերահսկողության իրականացման կարգը.

xi. վարկային կազմակերպությունների եւ բանկային հոլդինգների նկատմամբ պատժամիջոցների կիրառման կարգը, պայմանները եւ չափերը.

xii. բանկային խմբերի եւ բանկային հոլդինգների ֆինանսական հուսալիության ապահովմանը եւ գործունեությանը ներկայացվող պահանջները.

xiii. բնակչության ներդրումների ապահովագրման համակարգերի ստեղծումը եւ գործունեության իրականացումը (ներառյալ ներդրումների հետ կապված փոխհատուցումների վճարման գումարները).

xiv. վարկային կազմակերպությունների ֆինանսական առողջացման եւ սնանկության ընթացակարգերը (ներառյալ վարկատուների իրավունքների կանոնակարգումը, պահանջների բավարարման հերթականությունը).

xv. բանկային ճանաչվող գործառնությունների ցանկը.

xvi. այն կազմակերպությունների ցանկը եւ դրանց կարգավիճակը, որոնք իրավունք ունեն իրականացնել բանկային գործառնությունների առանձին տեխնոլոգիական մասերը:

2.1.1. «Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների՝ ֆինանսական շուկաներում գործունեության իրականացմանը ներկայացվող պահանջների մասին» համաձայնագրի շրջանակում, Կողմերը մշակում են տվյալ շուկայում գործունեություն իրականացնելու եւ վարկային կազմակերպությունների, բանկային հոլդինգների եւ բանկային խմբերի գործունեության հետ կապված այլ ոլորտներում

համակարգումն իրականացնելու նկատմամբ վերահսկողության եւ հսկողության բնագավառում Կողմերի իրավասու մարմինների փոխգործակցության պարամետրերը:

2.2. Ապահովագրական ոլորտում՝

2.2.1. Ազգային օրենսդրության շրջանակներում Կողմերը ստեղծում են ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակիցների կարգավորմանը եւ վերահսկողությանը ներկայացվող ներդաշնակեցված պահանջներ՝ իրենց գործողություններում առաջնորդվելով Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի արդյունավետ ապահովագրական վերահսկողության հիմնարար սկզբունքներով եւ լավագույն միջազգային փորձով, այդ թվում՝ կապված հետեւյալի հետ՝

i. «ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակից» հասկացությունը եւ դրա իրավաբանական կարգավիճակը.

ii. ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի ֆինանսական կայունության ապահովումը, այդ թվում՝ կապված հետեւյալի հետ՝

ա) ապահովագրության, համաապահովագրության, վերաապահովագրության, փոխադարձ ապահովագրության հետ կապված պարտավորությունների կատարման համար բավարար ապահովագրական պահուստները.

բ) ապահովագրական պահուստների ծածկման համար ընդունվող ակտիվների կազմը եւ կառուցվածքը.

գ) կանոնադրական եւ սեփական կապիտալների ձեւավորման նվազագույն մակարդակը եւ կարգը.

դ) ապահովագրական պորտֆելի փոխանցման պայմանները եւ կարգը.

iii. ապահովագրական ոլորտի համար Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան սահմանված աուդիտորական ստուգումների իրականացման եւ հաշվապահական հաշվառման կանոնները եւ Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական (հաշվապահական) հաշվետվողականության աուդիտի անցկացմանը ներկայացվող հետ կապված պահանջները.

iv. ապահովագրական գործունեության մեկնարկի եւ լիցենզավորման կարգը եւ պայմանները.

v. ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի գործունեության նկատմամբ Կողմերից յուրաքանչյուրի իրավասու մարմինների կողմից վերահսկողության իրականացման կարգը.

vi. ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակիցների կողմից շուկայում գործունեության իրականացման համար սահմանված կարգի խախտումների համար պատժամիջոցների կիրառման կարգը, պայմանները եւ չափերը.

vii. ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակիցների ղեկավար աշխատողների մասնագիտական որակավորմանը եւ գործարար համբավին ներկայացվող պահանջները.

viii. ապահովագրական գործունեության իրականացման համար լիցենզիա տալու մերժման հիմքերը.

ix. ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի լուծարման կամ վերակազմակերպման կարգը, ընթացակարգերը եւ պայմանները (այդ թվում՝ պարտադիր լուծարման/սնանկության).

x. ապահովագրական գործունեության իրականացման համար ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի լիցենզիան չեղարկելու, ինչպես նաեւ լիցենզիայի գործողությունը անվավեր ճանաչելու, սահմանափակելու կամ կասեցնելու հիմքերը.

xi. միաձուլման, միավորման եւ վերակազմակերպման ձեռով ապահովագրական շուկայի մասնագիտացված մասնակցի վերակազմավորման կարգը եւ առանձնահատկությունները.

xii. ապահովագրական խմբերի եւ ապահովագրական հոլդինգների կազմին եւ դրանց ֆինանսական հուսալիությանը ներկայացվող պահանջները:

2.2.2. «Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների ֆինանսական շուկաներում գործունեության իրականացմանը ներկայացվող պահանջների մասին» համաձայնագրի շրջանակներում, Կողմերը մշակում են Կողմերի իրավասու մարմինների փոխգործակցության պարամետրեր՝ տվյալ շուկայում գործունեության իրականացման նկատմամբ հսկողության եւ վերահսկողության իրականացման բնագավառում:

2.3. Արժեթղթերի շուկայում՝

2.3.1. Ազգային օրենսդրության շրջանակներում Կողմերը մշակում են ներդաշնակեցված պահանջներ եւ պայմաններ գործունեության հետեւյալ տեսակների համար՝

i. բրոքերային գործունեություն

արժեթղթերի շուկայում,

ii. դիլերային գործունեություն արժեթղթերի շուկայում,

iii. արժեթղթերի, ֆինանսական գործիքների կառավարման հետ կապված գործունեության, կենսաթոշակային ակտիվների եւ կոլեկտիվ ներդրումների հավատարմագրային կառավարում,

iv. փոխադարձ պարտավորությունների որոշման հետ կապված գործունեություն (քլիրինգ).

v. դեպոզիտար գործունեություն,

vi. արժեթղթեր տիրապետողների ռեեստրի վարման հետ կապված գործունեության.

vii. արժեթղթերի շուկայում առետրի կազմակերպման հետ կապված գործունեության:

2.3.2. Ազգային օրենսդրության շրջանակներում Կողմերը մշակում են ներդաշնակեցված պահանջներ սույն հոդվածի 2.3.1 ենթակետում նշված արժեթղթերի շուկայի կարգավորման եւ վերահսկողության համար՝ իրենց գործողություններում առաջնորդվելով Արժեթղթերի հանձնաժողովների միջազգային կազմակերպության, Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության արժեթղթերի շուկայի սուբյեկտների նկատմամբ արդյունավետ վերահսկողության հիմնարար սկզբունքներով եւ լավագույն միջազգային փորձով, այդ թվում՝ հետեւյալ կետերի հետ կապված՝

i. կանոնադրական կապիտալի ձեւավորման եւ վճարման կատարման կարգի սահմանումը, ինչպես նաեւ սեփական կապիտալի բավարար լինելուն ներկայացվող պահանջները.

ii. արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման համար լիցենզիայի տրման կարգը եւ պայմանները, այդ թվում՝ արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման համար լիցենզիայի ստացման համար անհրաժեշտ փաստաթղթերին ներկայացվող պահանջները.

iii. արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների ղեկավար աշխատողների մասնագիտական որակավորմանը եւ գործարար համբավին ներկայացվող պահանջները.

iv. արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման համար լիցենզիա տալու մերժման հիմքերը, ինչպես նաեւ լիցենզիայի գործողությունը անվավեր ճանաչելու, սահմանափակելու կամ կասեցնելու հիմքերը.

v. արժեթղթերի շուկայի գործունեության բոլոր տեսակների համար Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան սահմանված աուդիտորական ստուգումների իրականացման եւ հաշվապահական հաշվառման կանոնները եւ Աուդիտի միջազգային ստանդարտների համապատասխան ֆինանսական (հաշվապահական) հաշվետվողականության աուդիտի անցկացման, ինչպես նաեւ ներքին հաշվառման եւ ներքին հսկողությանը ներկայացվող պահանջները.

vi. արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների լուծարման կամ վերակազմակերպման կարգը, ընթացակարգերը եւ պայմանները (այդ թվում՝ հարկադիր լուծարման).

vii. արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման համար արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակցի լիցենզիայի չեղարկման հիմքերը.

viii. արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների կողմից ֆինանսական շուկայում գործունեության իրականացման կարգը խախտելու համար վարչական պատժամիջոցների կիրառման կարգը, պայմանները եւ չափերը.

ix. արժեթղթերի շուկայի սուբյեկտների (մասնակիցների) գործունեության նկատմամբ Կողմերից յուրաքանչյուրի իրավասու մարմինների կողմից վերահսկողության իրականացման կարգը.

x. արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցների գործունեությանը ներկայացվող պահանջները եւ պայմանները:

2.3.3. «Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետությունների ֆինանսական շուկաներում գործունեության իրականացմանը ներկայացվող պահանջների մասին» համաձայնագրի շրջանակներում, Կողմերը մշակում են տվյալ շուկայում գործունեության իրականացման նկատմամբ հսկողության եւ վերահսկողության բնագավառում Կողմերի իրավասու մարմինների փոխգործակցության պարամետրերը:

Հոդված 6

Ճանաչումը

1. Կողմը կարող է ճանաչել ցանկացած այլ Կողմի պրուդենցիալ միջոցները ֆինանսական ծառայությունների տրամադրմանը վերաբերող միջոցների նրա կողմից կիրառման հարցը որոշելիս: Այդպիսի ճանաչումը, որը կարող է ձեռք բերվել Կողմերի ազգային օրենսդրությունների ներդաշնակեցման միջոցով կամ այլ կերպ, կարող է հիմնվել շահագրգիռ Կողմի հետ համաձայնության կամ պայմանավորվածության վրա կամ կարող է իրականացվել միակողմանիորեն:

2. Ցանկացած այլ Կողմի հետագա կամ գործող պրուդենցիալ միջոցների ճանաչման մասին համաձայնության կամ պայմանավորվածության Կողմ համարվող Կողմը մյուս շահագրգիռ Կողմերին ընձեռում է այդպիսի համաձայնությունների կամ պայմանավորվածությունների միանալու հարցի շուրջ բանակցություններ վարելու կամ նմանատիպ այնպիսի համաձայնություններ կամ պայմանավորվածություններ ձեռք բերելու հարցի շուրջ բանակցություններ վարելու հնարավորություն, որոնք, ելնելով հանգամանքներից, կարող էին ներառել համարժեք կանոններ, նման կանոնների նկատմամբ հսկողություն եւ դրանց իրականացման մեխանիզմ, իսկ հնարավորության դեպքում՝ նման համաձայնությունների եւ պայմանավորվածությունների մասնակիցների միջեւ տեղեկությունների փոխանակմանը վերաբերող ընթացակարգեր: Եթե Կողմը ճանաչումն իրականացնում է միակողմանիորեն, ապա այն երաշխավորում է նաեւ ցանկացած այլ Կողմի՝ այդպիսի հանգամանքների առկայությունը ցույց տալու համապատասխան հնարավորության իրականացումը (իրավական մեխանիզմների կիրառմամբ):

Հոդված 7

ՄՏՏ այլ համաձայնագրերի կիրառումը

Սույն Հավելվածի դրույթները կիրառվում են՝ չհակասելով «Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետություններում արժույթային քաղաքականության համաձայնեցված

սկզբունքների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի դրույթներին եւ «Միասնական տնտեսական տարածքի մասնակից պետություններում ֆինանսական շուկաներում կապիտալի ազատ տեղաշարժի ապահովման համար պայմանների ստեղծման մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի դրույթներին:

Հոդված 8

Սահմանափակումների վերացումը

Յուրաքանչյուր Կողմ դադարեցնում է սույն Համաձայնագրի IV Հավելվածով սահմանված իր անհատական ազգային ցանկում նշված միջոցների կիրառումը ֆինանսական ծառայությունների այն ոլորտներում, որոնցում բոլոր Կողմերը կատարել են սույն Հավելվածի 5-րդ հոդվածի 1.3 կետով նախատեսված ազգային օրենսդրության ներդաշնակեցման պայմանը, սույն Հավելվածի 5-րդ հոդվածի 1.4 կետում նշված լիցենզիաների փոխադարձ ճանաչման պայմանը, բավարարել են սույն Հավելվածի 5-րդ հոդվածի 2-րդ կետում նշված պարամետրերը: